Կարողանալո՞ւ են Վենսին հասու դարձնել, որ նա այցելել է առաջին քրիստոնեական երկիր, որտեղ քրիստոնյա հոգեւոր հայրերը բանտարկված են եւ գտնվում են իշխանությունների թիրախում: Արդյո՞ք կարողանալու են Վենսին հասու դարձնել, որ Հայաստանում այսօր կան իրական պատարագներ եւ պատարագներ՝ ըստ Փաշինյանի ցանկության:

Կարդացեք՝ էջ 4

Ասֆալտը դարձրել էին մատի փաթաթան՝ էսքան կիլոմետր ասֆալտ ենք արել, էնքան կիլոմետր ասֆալտ ենք արել, բայց եթե մի հատ ձյուն պիտի գա, ու աղից ասֆալտը դառնա զրո, քայքայվի գնա, նշանակում է, որ այն անորակ է: Միջին վիճակագրական ՔՊ-ականի մոտեցում է սա: ԱՆԻՖ-ի փողերը որ մսխեցին, այդտեղ ի՞լ էր աղը մեղավոր:

Կարդացեք՝ էջ 6

Պաշտոնյայի դեպքում հարցազրույց տալը համապետական սփռում ունեցող լրատվամիջոցին ոչ թե հաճույքի կամ պարապությունը հաղթահարելու միջոց է, այլ օրենքով սահմանված պարտականություն: Մենք Լոռվա մարզպետ Արեն Մկրտչյանից չէինք պահանջում մեզ անձնական լավություն անել, այլ ուզում էինք, որ պաշտոնյան հարգի օրենքը:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 15 (4150), 10 փետրվար, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Չնայած նախկին կյանքում Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցները բզկտում էին նախկիններին՝ կրթական ոլորտը քաղաքականացնելու, դպրոցների տնօրեններին ՀՀԿ-ական դարձնելու համար, եւ ասում էին, որ նրանց շնորհիվ է իշխանությունը վերարտադրվում, իրենք ոչ միայն շարունակում են հին ու բարի ավանդույթները, այլեւ կատարելագործել են դրանք: ՔՊ պատգամավորության թեկնածուների մեջ դպրոցների տնօրեններ կան: ՔՊ թեկնածուներ են առաջադրվել նաեւ մի շարք ԲԿ-ների տնօրեններ, որի նպատակը ոչ թե նրանց պատգամավոր դարձնելն է, այլ որպես ձայն բերող օգտագործելը: Օրինակ, ակնհայտ է, որ «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ տնօրեն Նարեկ Զեյնալյանը, «Նորք-Մարաշ» ԲԿ տնօրեն Միքայել Ադամյանն իրենց հետեւում ունեն մեծ կոլեկտիվներ, որոնց ուղղորդելու են՝ ընտրությունների ժամանակ քվեարկել հօգուտ ՔՊ-ի:

ՔՊ վարչությունը, ըստ լուրերի, քննությունից «կտրել» է նաեւ Արագածոտնի նախկին փոխմարզպետ Էդգար Փարվանյանին, որն Ապարանում հեղինակություն է համարվում: Նա զովացուցիչ ըմպելիքներ արտադրող «Ապարան գրուպ» ընկերության տնօրենն է, բայց լարված հարաբերություններ ունի Փաշինյանի պատարագներին միշտ մասնակցող մարզպետ Սերգեյ Մովսիսյանի հետ: Փարվանյանի անունը, հիշեցնենք, վերջին տարիներին աղմկոտ պատմությունների մեջ է շոշափվել: Հայտնի է, որ ՔՊ պատգամավորության հայտ ներկայացրած 380 թեկնածուից 100-ին վարչությունը կտրել է, սակայն նրանցից միայն մի քանիսի մասին իմացանք, մասնավորապես՝ ՔՊ պատգամավորներ Հայկ Սարգսյանի, Հայկ Ցիրունյանի, Կարեն Սարուխանյանի եւ Ջուլիետա Ազարյանի: ՔՊ-ից վստահեցնում են, որ «կտրվածների» մեծ մասը նման աղմկահարույց սկանդալների մասնակիցներ են:

Փետրվարի 7-ին մահացած հայտնաբերված պայմանագրային զինծառայող Դավիթ Մանուկյանը 22 տարեկան էր, Նոյեմբերյանի Բագրատաշեն գյուղից: Բագրատաշենի վարչական ղեկավար Սարգիս Անտոնյանը մեզ ասաց, որ Դավիթը դեպքից 2 օր առաջ իրենց տանն է եղել: Նա «Պաշտպան հայրենյաց» ծրագրով էր ծառայում՝ Կողբի զորամասում: Ծառայության ավարտին 1 տարուց ավելի դեռ կար: Դավիթ Մանուկյանը տան միակ տղան էր, նրանից բացի, ընտանիքում կա աղջիկ, որն անցյալ տարի է ավարտել միջնակարգը: Նախնական տարբերակով՝ շրջանառվում է ինքնասպանության վարկածը: Դավիթ Մանուկյանի հուղարկավորությունը տեղի կունենա փետրվարի 11-ին:

Աղոթք մի ըսեր

«Պատարագասեր» Փաշինյանն այլեւս նախապես չի հայտնում, թե որ եկեղեցին է այդ կիրակի ասպատակելու: Պատարագից րոպեներ առաջ նրա անձնական թիկնազորի վերածված ոստիկանությունն աղմուկով գրոհում է «զոհ եկեղեցու» վրա՝ մաքրում շրջակայքը, զննում եկեղեցու ներսը, ապա ժամանում է իր իսկ նախաձեռնության ձեռքը կրակն ընկած ու փակուղի մտած Փաշինյանը: Այս կիրակի նա Արաբկիրի եկեղեցում էր, ինչի մասին իմանալով, հավատացյալներն ուղղակի փախչում էին՝ չթաքցնելով իրենց բացասական վերաբերմունքը պատարագը «հարամելու» այդ գործընթացի նկատմամբ: «Խարասմենթի» հայկական տարբերակն է սա, երբ երկրի առաջին դեմքի կողմից բռնություն է կիրառվում հասարակ մարդկանց նկատմամբ: Իրական քրիստոնյան սովորաբար հաճախում է իր համայնքի եկեղեցին՝ լուռ, անաղմուկ, երբեմն ուխտի է գնում Էջմիածին: Պատարագ եւ հաղորդություն ստանալու համար մարդիկ միշտ իրենց սիրելի եկեղեցին են գնում՝ առանց ցուցադրության եւ մյուս հավատացյալների նկատմամբ նման անպատմելի բռնության: Նույն եկեղեցի այցելող մարդիկ դառնում են մի հոտի անդամներ, ճանաչում են իրար, իրենց քահանայի հետ ձեւավորում են համայնք, հոգեւոր թելերով կապվում միմյանց: Իսկ փաշինյանական շրջիկ պատարագները հյուրախաղեր են, որոնք խաթարում են տվյալ համայնքի հոգեւոր անդորրը: Դա ոտնձգություն է մարդկանց անձնական կյանքի, կրոնական ազատությունների նկատմամբ: Նա մարդկանց ստիպում է, որ իր շապիտոյի մասնակիցը դառնան: Եվ եթե սա ընդամենը նախընտրական թատրոն է, գոնե պետք է այցելի այն համայնքները, որտեղ դեռ ընտրողներ ունի, այլ ոչ թե, ասենք, Արաբկիր համայնք, որտեղ իրեն համատարած մերժում են, չեն ուզում իր շրջիկ կրկեսի մասնակիցը դառնալ: Եթե սա ընդամենը քարոզչական աշխատանք է, մեղք է դրա անունը աղոթք դնելը:

Երեկ առավոտից 44-օրյա պատերազմում անհետ կորած զինծառայողների հարազատներն ԱԺ-ում էին: Նրանք հանդիպումներ էին պահանջում ԱԺ նախագահության, ՔՊ-ական պատգամավորների հետ: Բանն այն է, որ դեռեւս անցած տարեվերջին դիմել են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին՝ խնդրելով թույլ տալ, որ ծանոթանան 44-օրյա պատերազմի զեկույցին, որը, ինչպես հայտնի է, չի հրապարակվել, խորհրդարանում չի քննարկվել, այլ ուղարկվել է խորհրդարանի գաղտնի բաժին, քանի որ ԱԺ ղեկավարությունը կարծում է, որ զեկույցի պատրաստման ժամկետները խախտվել են: Անհետ կորածների հարազատներին, սակայն, ԱԺ նախագահությունը չի պատասխանել, ինչի առիթով էլ երեկ նրանք գնացել էին խորհրդարան: Միայն մի քանի ժամ բողոքի ակցիա իրականացնելուց հետո նրանց տեղեկացրել են, որ չեն կարող զեկույցին ծանոթանալ՝ գաղտնիության հասանելիություն չունենալու պատճառով: Հայտնի է, որ նույնիսկ ԱԺ պատգամավորներից ոմանք, ովքեր չունեն գաղտնի տեղեկատվության հետ ծանոթանալու հատուկ թույլտվություն, չեն կարողանում ծանոթանալ զեկույցին: Մերժում ստանալուց հետո հարազատները շարժվել են նախագահական նստավայր եւ շարունակել բողոքն այնտեղ:

ՇՊԱՐԳԱԼԿԱ՝ ՍԵՂԱՆԻ ՈՏՔԻ ՏԱԿԻՑ

Իջեւանից մեզ հայտնեցին, որ փետրվարի 1-ին ավագ դպրոցի շենքում «Կենսաբանություն» առարկայի միասնական քննությունը խախտումներով է անցել: Քննության որոշ մասնակիցների օգնել են, ինչը դժգոհություն է առաջացրել քննվողների շրջանում: Արդյունքում ոմանք այդ քննությունից անհամաչափ բարձր գնահատականներ են ստացել: Մեզ հայտնեցին, որ քննության ընթացքին հետեւող պաշտոնյաներից մեկը, շրջելով քննասենյակում, «նկատել է», որ սեղաններից մեկը թեքված է՝ հավասարակշիռ դիրքում չէ, եւ այն ուղղելու համար՝ սեղանի ոտքերից մեկի տակ ծալած թուղթ է տեղադրել: Քիչ անց այդ սեղանի մոտ նստած քննության մասնակիցը սեղանի ոտքի տակից հանել է ծալված թուղթը եւ դրանից արտագրել հարցերի պատասխանները, ինչը նկատել են մյուս աշակերտները: Իջեւանից հայտնեցին, որ քննության մասնակից աշակերտները նամակ-բողոք են գրել ԿԳՄՍ նախարարություն: Մեզ չհաջողվեց կապվել ԿԳՄՍ նախարարի մամուլի քարտուղարի հետ, որպեսզի բողոքի հետագա ընթացքի մասին պարզաբանում ստանայինք:

Նա ծնկի չի գալիս, դերասանի պես չոքում է

*«Հրապարակի» զրուցակիցը **Տեր Վրթանես քահանա Բաղալյանն** է:*

- Տեր Հայր, հանրության մի զգալի հատված սպասում է, որ Եպիսկոպոսաց ժողովն անպայման տեղի է ունենալու, անգամ՝ առցանց եղանակով, սակայն այս մասին որեւէ հայտարարություն դեռ չի արվում: Գաղտնիք չէ, որ իշխանությունները, հայտնի պատճառներով, խոչընդոտեցին դեկտեմբերին եպիսկոպոսների մուտքը Հայաստան, հիմա էլ փորձում են խոչընդոտել ելքը Հայաստանից, քանի որ ժողովն Ավստրիայում է կայանալու: Ըստ Ձեզ, տեղի կունենա՞ ժողովը՝ օնլայն եղանակով:

- Եպիսկոպոսաց ժողովը կլինի օնլայն, թե օֆլայն, կլինի Էջմիածնում, թե Հայաստանի սահմաններից դուրս, մեր եկեղեցին մոնարխիկ կառույց է՝ հիերարխիայով օծյալ գահակալի կողմից կառավարվող: Մեծ հաշվով, այդ ժողովում հաստատված բոլոր որոշումները Վեհափառի հաստատումից հետո միայն ստանում են իրավական ուժ: Գերագույն խորհրդից մինչեւ խորհրդատվական մարմիններ՝ սպասում են որոշում կայացնողին. նա օծյալ գահակալն է: Այսինքն՝ Վեհափառը կարող է անգամ առանց եպիսկոպոսաց ժողովների լուրջ որոշումներ կայացնել, եւ այդ որոշումները ստանան իրավական հիմք: Իսկ տիրադավները եւ կոմպրոմատների շնորհիվ Նիկոլի ծուղակն ընկածներն առանձնապես մեծ իրավունքներ չունեն եկեղեցու ներսում, նրանք չեն կարող հարցեր որոշել, մանավանդ, որ նրանց հայտարարությունները՝ նախկին եպիսկոպոսաց ժողովների ժամանակ արված, պահպանվել են, որտեղ նրանք իրենց անվերապահ աջակցությունն են հայտնում Մայր Աթոռին, Վեհափառին եւ այլն: Նրանք այն մարդիկ են, ովքեր ծնկի են եկել, հավատարմության ուխտ են տվել, ուստի պարտավոր են այդ ուխտը պահել: Նրանց հայտարարությունները որեւէ իրավական ուժ ու արժեք չունեն: Ցավով եմ ասում, բայց նրանք կործանված մարդիկ են:

- Կիրակի օրը Փաշինյանը հերթական եկեղեցին, ինչպես ասում են, «պղծեց»՝ իր ներկայությամբ: Այս անգամ «պատարագին» ավելի քիչ մարդ էր ներկա: Իր թիմակիցներից անգամ մարդ չկար: Հետաքրքրականն այն է, որ ամեն անգամ նրա ներկայությամբ զեղչվում է կաթողիկոսի անունը, սակայն հաջորդ պատարագներն այդ նույն եկեղեցիներում ընթանում են բնականոն հունով, առանց որեւէ զեղչումների:

- Ասեմ ավելին՝ անգամ Փաշինյանի ներկայությամբ Վեհափառի անունը լիարժեքորեն չեն կարողացել զեղչել, քանի որ բոլոր եկեղեցիներում գտնվում են հավատացյալներ, ովքեր հավատարիմ են Աստծուն, ինչպես նաեւ՝ Մայր Աթոռին եւ Վեհափառին: Նրանք անպայման բարձրաձայնում են Վեհափառի անունը: Հովհաննավանքի շոու-պատարագից մինչեւ Կոմիտասի եկեղեցու պատարագ, չի եղել մի նախադեպ, որ գոնե մի քանի անձ Վեհափառի անունը չբարձրաձայնի: Պատճառն այն է, որ հավատացյալ ժողովուրդը սիրում ու հարգում է կաթողիկոսին, եւ բոլորն էլ հասկանում են, որ տեղի ունեցածը Փաշինյանի կողմից է պարտադրվել: Անգամ պաշտոնյաներն ու տիրադավներն են պարտադրված գործում: Մեկը վախենում է աշխատանքը կորցնել, մյուսը վախենում է, որ իր պիղծ արարքները ջրի երես դուրս կգան…. այնքան վիրավորական է՝ Հայաստանում կան բազմաթիվ երաժիշտներ, նրանցից շատերն անգամ աշխատանքի խնդիր ունեն: Օպերան զավթել են Դուրգարյանները, դարձել է ընտանեկան բիզնես, որտեղ մարդիկ են հայտնվել, ովքեր ոչ մասնագիտական փորձ ունեն, ոչ կրթություն, ու այդ ամենի ֆոնին նվագում է վարչապետը, որը մասնագետ չէ, անտաղանդ է: «Ուդարնիկի» հնչյունների տակ էլ պարում են պարելու շնորհք չունեցող առողջապահության նախարարը եւ այլ մարդիկ: Մարդկանց պարտադրաբար տանում են համերգների, ուխտերթերի: Որքան էլ որ այդ մարդիկ լրատվամիջոցներից թաքցնեն ճշմարտությունը, միեւնույն է՝ գնում են տուն՝ իրենց հարազատների, մտերիմների շրջանակներում պատմում են, որ պարտադրանքով են գործել, որ իրենց ստիպել են, սպառնացել: Իսկ Վեհափառը սիրված է թե՛ հոգեւորականների կողմից, թե՛ հավատացյալ ժողովրդի: Նա ունի մեր անմնացորդ աջակցությունը, փառահեղ կերպով կառավարում է Հայ առաքելական եկեղեցին, ինչն էլ իր հերթին Նիկոլ Փաշինյանի նախանձն է շարժում, Ալիեւի, Էրդողանի եւ Փաշազադեի կատաղությունը, թշնամանքը մեր եկեղեցու եւ Վեհափառի դեմ: Այս ամենը միայն Վեհափառի դեմ չէ, սա բոլորիս դեմ է:

- Փաշինյանն ամեն անգամ եկեղեցում ծնկի է գալիս, Եռաբլուրում էլ է ծնկի գալիս: Իրական հավատացյալները ո՞ր դեպքերում են ծնկի գալիս: Ո՞րն է դրա խորհուրդը:

- Նա ծնկի չի գալիս, դերասանի պես չոքում է: Նա մի մարդ է, ով ասում է՝ կարող էինք պատերազմում այսքան զոհ չունենալ, բայց ունեցանք, որպեսզի մեզ դավաճան չասեն, դրանից հետո գնում է Եռաբլուր եւ այնտեղ չոքում է…. հետո զոհվածի ծնողի առաջ է չոքում, եկեղեցում է չոքում, բայց նրա բուն նպատակը պատարագը չէ, հավատքը չէ: Նա ունի մի նպատակ՝ կաթողիկոսի անունը զեղչել ու եկեղեցին հերձել: Նա հիմնել է աղանդ՝ տիրադավների աղանդ, որի հիմքում շանտաժն է, շահը: Նրանք արդեն վաղուց ժողովրդի սերն ու հարգանքը չեն վայելում: Եկեղեցին շատ է քննադատվել հենց այդ տիրադավների պատճառով, լավ է, որ Նիկոլ Փաշինյանը մագնիսի նման բոլոր ոչ նորմալ հոգեւորականներին քաշեց իր կողմը, դրանով իսկ մաքրեց եկեղեցին աստվածուրացների նողկալի խավից:

- Իսկ, առհասարակ, ե՞րբ են հավատացյալները ծնկի գալիս:

- Տարբեր հատվածներ կան Տեր ողորմյայի ժամանակ, խոստովանության ժամանակ եւ այլն: Բայց Նիկոլ Փաշինյանը ծնկի չի գալիս, նա անտաղանդ դերասան է, կեղծավոր ու ստախոս: Փորձում է միջավայր ստեղծել, թե իբրեւ այդ ամենն անում է որպես հավատացյալ մարդ, սակայն նա երբեք Հայ առաքելական եկեղեցու անդամ չի եղել, ոչ եկեղեցում պսակադրվել է, ոչ մկրտվել է, ոչ երբեւէ աղոթքի է եկել: Նա դասական կեղծավոր ու խաբեբա է: Ընտրություններ են սպասվում, ցանկանում է այդ ամենի ֆոնին թուլացնել եկեղեցու դիրքերը, սակայն լավ կանի՝ դրա փոխարեն իր խոստումների գոնե մեկ տոկոսը կատարի:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Նա մնացել է 2018 թվականում, իսկ մարդիկ հիմա ուժեղ ձեռք են փնտրում

Ընտրություններին ընդառաջ, քաղաքական գրեթե բոլոր ուժերը սկսել են ոչ պաշտոնական քարոզարշավը: Ընդդիմադիրներն այցելում են մարզեր, դահլիճներ են հավաքում, ելույթներ են ունենում, տարաբնույթ խոստումներ են տալիս, շատ հաճախ կրկնվում են, բանակցություններ են վարում այլ քաղաքական ուժերի հետ, քննարկում-կոնֆերանսներ են կազմակերպում, հայտարարություններ են անում, նոր շարժումներ ու միավորներ ստեղծում եւ այլն: Իշխանություններն էլ, մոռանալով, որ 2021-ի նախընտրական խոստումներից եւ ոչ մեկը չեն կատարել, դարձյալ վերընտրվելու հայտ են ներկայացրել եւ փորձում են կոծկել իրենց ձախողումները, ներկայացնել, որ իրենց ծրագրերն ու խոստումները կատարելն իրենցից անկախ պատճառներով են եղել: Բայց կյանքը ցույց է տալիս, որ ոչ ասելիք ունեն, ոչ ծրագիր, ոչ գաղափարախոսություն: Ինչպես առանց «իզմ»-երի եկան իշխանության, այդպես էլ 8 տարի իշխելուց հետո փորձում են վերարտադրվել: Իսկ Նիկոլ Փաշինյանի ասելիքն այն աստիճան է սպառվել, այնքան անելիք չունի, որ այժմ շրջում է քաղաքով եւ տուրիստի նման տեսանյութեր նկարում՝ տեղադրում իր էջում: Օրինակ, Սայաթ-Նովայի փողոցում տարիներով կանգնած մի շենք է նկարում եւ շնորհակալություն հայտնում ներդրողին, Հյուսիսային պողոտայում մի ռուս երաժշտի ելույթ է նկարում եւ հիանում:

Քաղտեխնոլոգ **Կարեն Քոչարյանից** «Հրապարակը» հետաքրքրվեց՝ ինչո՞ւ է Փաշինյանը որոշել նման գրառումներ կատարել, որոնք անգամ հազար լայքի չեն արժանանում, եւ դա ի՞նչ է նրան տալիս: Քոչարյանն ասաց. «Նա ունի երկու խնդիր: Աշխատում է այնտեղ, որտեղ թույլ է, ինչը շատ բնական է: Նա թույլ է երիտասարդության շրջանում, ինչպես նաեւ՝ մայրաքաղաք Երեւանում: Նա փորձում է հիմա աշխատել երեւանցիների եւ երիտասարդների վրա: Շենքերի մասին խոսելով, փորձում է երեւանցիների վրա աշխատել, իսկ դիսկոտեկները, վարչաբենդերը եւ սրտիկները՝ երիտասարդության վրա: Դա է այս տեխնոլոգիայի իմաստը: Ես չգիտեմ, թե այդ ամենն ինչ կարող է տալ երեւանցիներին կամ երիտասարդությանը, սակայն նա այս քայլերով կոնկրետ այդ երկու խմբերի վրա է աշխատում: Թալան, նախկիններ եւ այլն, այս ամենի դոզան լինելու է համեմատաբար քիչ, քանի որ այստեղ երկու խնդիր կա: Առաջինը՝ հնացել է թեման, եւ հետո՝ իր հիմնական հակառակորդն այս անգամ նախկին իշխանության ներկայացուցիչ չէ: Ուստի ինքը պոպուլիզմով, ավելի սոցիալական, զվարճալի եղանակներով փորձելու է պայքարել «Մեր ձեւով»-ի դեմ: Այս տեխնոլոգիաները կաշխատեն, թե ոչ, ցույց կտան ընտրությունները, ես չեմ հավատում սոցիոլոգիական հարցումներին, որոնք արվում են Հայաստանում՝ ոչ այն պատճառով, որ դրանք կեղծված են կամ պատվիրված, այլ այն բանի համար, որ հայ հասարակությունը նման հարցումների ժամանակ անկեղծ պատասխան չի տալիս»:

Քաղաքագետ **Ստեփան Դանիելյանն** էլ, խոսելով թեմայի մասին, մեզ հետ զրույցում ասաց. «Ըստ իս՝ նա մնացել է 2018 թվականում: Նրա հաջողությունն այդ ժամանակ այն էր, որ կար մի իշխանություն, որ կտրված էր ժողովրդից, եւ ահա՝ ժողովրդի ծոցից դուրս եկավ մի տղա, որը խոսում է ժողովրդի լեզվով, ժողովրդի անունից, շփվում է մարդկանց հետ, սրճարաններ է գնում, մետրո է նստում, ոտքով քայլում է Գյումրիից Երեւան: Այն կերպարը, որ նա ժողովրդի մարդն է եւ անդադար շփումներ է ունենում ժողովրդի հետ, լայվեր է անում եւ այլն, անգամ կառավարական ամառանոց տեղափոխվելիս էր նա պրոցեսն ուղիղ եթերով ցույց տալիս, հետո անգամ ցույց տվեց իր լոգարանը, զուգարանը եւ այլն, շատերին գերեց, դրանք նման էին սերիալների, եւ շատերը կարծում էին, որ դա ռեալ կապ է իշխանության եւ հասարակության միջեւ: Տարիների ընթացքում շատ բան փոխվեց: Արցախի կորուստ, մեծ ողբերգություններ, զոհեր եւ այլն, այս մարդն այլեւս չունի ասելիք: Նա անդադար արդարացնում է ինքն իրեն եւ փնտրում մեղավորներ: Այժմ էլ ընտրություններն են մոտենում, սակայն նա չունի նոր ասելիք, ուստի հին կերպարի մեջ է մտել, ուզում է ցույց տալ, թե իբրեւ ինքը ժողովրդի մարդն է, փողոցներով քայլում է մենակ, անկաշկանդ, առանց վախերի ու թիկնապահների, ինչ-որ հիմար գլխարկներ է կրում, դրանք փոխում է, մոտենում է փողոցային երաժիշտներին, նկարում է նրանց եւ այլն: Նա ուզում է 2018 թվականի ազդեցությունը հետ բերել, սակայն դա իր մոտ չի ստացվում, որովհետեւ կյանքը փոխվել է, փոխվել են առաջնահերթություններն ու խնդիրները, փոխվել է իրավիճակը: Մարդկանց այլեւս հետաքրքիր չէ, որ վարչապետը կարող է լինել ժողովրդի ծոցից դուրս եկած, ավելին՝ մարդիկ ուժեղ ձեռք են փնտրում, որից կարող են ամուր բռնվել, ուժեղ կադրեր են ուզում, որոնց վրա կարող են հույս դնել, պատասխանատու մասնագետներ են ուզում, քանի որ արդեն իսկ տեսել են, թե ինչ հետեւանքներ կարող է թողնել «ժողովրդի մարդը»: Սակայն այս մարդը չի կարողանում նոր կերպար գտնել իր համար: Նա կորցրել է ժամանակի զգացողությունը, ինչն անպայման կթողնի իր հետեւանքները»:

ԱՄՆ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՅՆՊԻՍԻ ԳՈՐՈՎԱՆՔՈՎ ԷՐ ՎԵՆՍԻՆ ՆԱՅՈՒՄ, ԿԱՐԾԵՍ ՆԱ ԵԿԵԼ ԷՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի՝ Հայաստան այցին ընդառաջ, բուռն սպասումներ էին գեներացվում հատկապես իշխանական եւ մերձիշխանական շրջանակներում:

Ու մինչ արեւմտամետները լեգենդներ էին հյուսում այս այցի եւ Հայաստանին սպասվելիք «փրկության» մասին՝ հայտարարելով, որ սկիզբ է դրվելու Թրամփի ուղու գործարկմանը, ու դեպի Հայաստան են հոսելու միլիարդավոր դոլարներ, Վենսի այցից հինգ պակաս համացանցում լայն տարածում գտավ Պետդեպարտամենտի նախկին աշխատակից, «Պատուհան դեպի Եվրասիա» վերլուծական բլոգի հեղինակ Փոլ Գոբլի սկանդալային հարցազրույցը, որում նա բացահայտում է այցի որոշ տողատակեր:

Այդպիսով, ըստ Գոբլի, Միացյալ Նահանգների իրական նպատակը մեր տարածաշրջանում հակաիրանական առանցքի ձեւավորումն է, ինչպես նաեւ՝ Ռուսաստանի եւ Չինաստանի ազդեցության հնարավոր նվազեցումը: Գոբլն ակնհայտորեն դրական է արտահայտվում Ադրբեջանի վերաբերյալ՝ նշելով, որ Միացյալ Նահանգներն այժմ Ադրբեջանը դիտարկում է որպես ուժ, որի հետ անհրաժեշտ է հաշվի նստել Հարավային Կովկասում, եւ որ ԱՄՆ-ն այլեւս չի ընկալում Ադրբեջանը որպես նախկին խորհրդային տարածքի մաս: Փոխարենը՝ Հայաստանի դերն այցի շրջանակներում երկրորդական է: Ջեյ Դի Վենսի այցը Երեւան ավելի շուտ քաղաքական ազդակ է, որ Միացյալ Նահանգները չի հեռանում Հայաստանի օրակարգից, ինչը հատկապես կարեւոր է առաջիկա խորհրդարանական ընտրությունների ֆոնին:

Այցը Հայաստանի համար նաեւ քաղաքական «ապահովագրող» գործոն է՝ ուղղված ներքին կայունության պահպանմանը եւ ռուսական ազդեցության հետագա նահանջին: Կարճ ասած, Վենսի երեւանյան այցը, ըստ Գոբլի տրամաբանության, ավելի շատ աջակցություն է Փաշինյանի թիմին՝ Ազգային ժողովի ընտրություններին ընդառաջ. «Կարծում եմ, որ դա աջակցություն է: Կարող էր այնպես լինել, որ Ջեյ Դի Վենսն այցելեր միայն Բաքու: Կօգտագործի՞ արդյոք Փաշինյանը դա ընտրություններում՝ իր հնարավորությունները բարձրացնելու նպատակով՝ անկասկած: Նա հսկայական խնդիրներ ունի երկրում: Նա կոնֆլիկտի մեջ է Եկեղեցու հետ, որն ավելի բարեկամական է Մոսկվայի նկատմամբ, քան ինքը: Նա խնդիր ունի Ղարաբաղի փախստականների հետ: Հայաստանն ունի տարատեսակ տնտեսական խնդիրներ, եւ ամերիկացիները, վստահաբար, կարող են օգնել այդ հարցերում»:

Եվ այն, թե ինչպիսի անթաքույց հրճվանքով դիմավորեցին Վենսին, ինչ լայն ժպիտով ու գորովանքով էր նրան նայում Փաշինյանը նախագահականում ընդունելիս, ինչպես էին բարձրաստիճան պաշտոնյաների մի ամբողջ խուռներամ շտապել օդանավակայան՝ խախտելով անգամ արարողակարգը, խոսում էր հենց այդ մասին, որ ՔՊ-ն համարում է՝ Վենսը եկավ, իր հետ ՔՊ-ի վերընտրվելու երաշխիքը բերեց: Բայց այդ նույն դիմավորման արարողությունը նաեւ ի ցույց դրեց մեր իշխանությունների փնթիությունն ու թափթփվածությունը. անհասկանալի մեծ թվով մարդիկ՝ օդանավակայանի տարածքում, դեսուդեն գնացող մարդիկ, անգամ պատվո պահակախմբի անհասկանալի շարք, օդանավից իջնող Վենսին ու իր ընտանիքին դիմավորողների անկազմակերպ խառնամբոխ: Կարելի է կարծել, այս իշխանության ներկայացուցիչներն այլ պետություններ երբեւէ չեն այցելել, այդ այցերի տարրական արարողակարգը չեն կարողանում ապահովել: Փոխարենը՝ ողջ մայրաքաղաքը կաթվածահար էին արել, ինչ է թե՝ մի օրով մի ամերիկացի պաշտոնյա է Հայաստան եկել:

ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյայի՝ Հայաստան այցը ոգեւորել էր նաեւ հայաստանյան ընդդիմությանը. երեկ կեսօրից, իրար հերթ չտալով, տարբեր ուժեր կոչ-հայտարարություններ, բաց նամակներ էին հասցեագրում ԱՄՆ փոխնախագահին՝ նրա ուշադրությունը հրավիրելով Բաքվում պահվող հայ պատանդների ազատ արձակման հարցին, կոչ էին անում Հայաստանի իշխանությունների հետ հանդիպման ժամանակ բարձրացնել ապօրինի հետապնդումների ենթարկվող Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւորականների, ինչպես նաեւ՝ քաղաքական հալածանքների ենթարկվող այլ անձանց հարցերը:

ԱՄՆ փոխնախագահի՝ նախագահական նստավայր ժամանելուց մի քանի ժամ առաջ Բաղրամյան պողոտայում ուղղակի արտակարգ դրություն էր հայտարարվել, ոստիկանական մեծաթիվ խմբեր էին կուտակել, որոնք հետ էին մղում նախագահականի առջեւ բողոքի ակցիայի դուրս եկած 44-օրյա պատերազմի զոհերի ծնողներին ու հարազատներին, վտարանդի արցախցիներին, քաղաքական գործիչներին, որոնց գլխավոր պահանջը Բաքվում պահվող պատանդների վերադարձն էր: Վենսին օդանավակայանում դիմավորելու, ապա ուղեկցելու, նախագահականում ընդունելու կադրերից խեղճություն էր ծորում: ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք առավոտից երեկո թմբկահարում են ՀՀ ինքնիշխանության մասին, ցույց տվեցին, որ դեմ չեն վասալ լինելուն, միայն ոչ թե Ռուսաստանի, այլ՝ ԱՄՆ-ի վասալը: Բարձրաստիճան պաշտոնյաները քիչ էր մնում բարձրանային ինքնաթիռ եւ գրկած իջեցնեին Վենսին: Դիմավորողների թվում էին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, փոխարտգործնախարար Վահան Կոստանյանը, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Մենք կհետեւենք նաեւ Ադրբեջանում Վենսի ընդունելությանը եւ այցի ընթացքին՝ հասկանալու, թե ով ինչ բնույթի հարաբերություններ է կառուցում եւ ով է ինքնիշխան, ով՝ վասալության հակված:

Շարունակելի



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀՀ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՊԵՏՔ Է ԳՏՆՎԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Մինչ փետրվարի 4-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն Աբու Դաբիում մասնակցում էր «Զայեդ» մարդկային եղբայրության 2026 թ. մրցանակաբաշխությանը, դրան զուգահեռ Բաքվում ընթացող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների շինծու դատավարությունն ավարտվեց, եւ հայտնի դարձան դատավճիռները. ցմահ ազատազրկման դատապարտվեցին Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանը, Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, գեներալ-մայոր Դավիթ Մանուկյանը, Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը եւ նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը: Նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը եւ Բակո Սահակյանը դատապարտվեցին 20 տարվա ազատազրկման, քանի որ Ադրբեջանի օրենսդրությունն արգելում է 65 տարին լրացած անձանց ցմահ ազատազրկել:

Գերությունից վերադարձած **Գեւորգ Սուջյանը**, որը հավանական է՝ խորհրդարանական ընտրություններին հանդես գա իշխող կուսակցության ցուցակով, իր ֆեյսբուքյան էջում օրերս գրառում էր արել. «Անօրեն, քաղաքական, շինծու ադրբեջանական թատրոնն ավարտվեց, մեր հայ պատանդներին ազատազրկեցին բոլոր հնարավոր եւ անհնար օրենքների խախտումներով: Պետք է սկսենք համահայկական, ազգային շարժում՝ առանց դադարի, առանց շունչ քաշելու, քանի որ այս ամենն ուղղված է մեզ՝ բոլորիս, այսօր դատեցին մի ամբողջ ազգի»:

Գեւորգ Սուջյանին հարցրինք՝ Հայաստանի իշխանությունը կարծես թե այդքան էլ շահագրգռված չէ գերիներին վերադարձնելու հարցում, ավելին՝ Փաշինյանը ժպտում է Ալիեւին, առանց խաղաղության փաստաթուղթը ստորագրելու՝ շնորհակալություն է հայտնում նրան, նրա հետ համատեղ մրցանակ ստանում, այնինչ, թվում է՝ իշխանության առաջնահերթ պահանջն ու անելիքը պետք է լիներ գերիների վերադարձը: Այդ դատավճիռների կապակցությամբ իշխանության ներկայացուցիչներն անգամ մի դատապարտման խոսք չասացին: Ինչ կարծիքի՞ եք իշխանության այս մոտեցման մասին: «Միանշանակ, ես կարծում եմ, որ պետք է լինի հստակ պահանջ՝ գերիների վերադարձի հետ կապված, իսկ մնացած քաղաքական հարցերի շուրջ ես դեռեւս գտնվում եմ դիտորդի դերում, միեւնույն ժամանակ առաջնորդվելով մեր երկրի եւ ժողովրդի շահերի առաջնայնության գաղափարախոսությամբ»:

Եթե այս իշխանությունը մատը մատին չտա՝ Ադրբեջանում մնացած գերիներին վերադարձնելու համար, Դուք միայնակ կպայքարե՞ք, եթե այո՝ ինչպե՞ս եք պատկերացնում այդ պայքարը: «Ես պայքարելու եմ ինչպես ՀՀ քաղաքացի ու առաջնորդվելու եմ այս գաղափարախոսությամբ. «Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի եւ հայ՝ անկախ իր զբաղեցրած պաշտոնից, դիրքից, գտնվելու վայրից կամ ով լինելուց, պետք է իմանա, որ գտնվում է պետության եւ ժողովրդի հովանու ներքո»: Պետք է հասկանանք, որ մեր ուժն ազգի միաբանության մեջ է»:

Հիշեցնենք, որ Գեւորգ Սուջյանը՝ երեք այլ անձի հետ, մոտ մեկ ամիս առաջ վերադարձավ գերությունից, եւ առաջին բանը, որ արեց՝ իր երախտագիտությունը հայտնեց Նիկոլ Փաշինյանին եւ ուղիղ եթերում պատմեց, որ իր ընտանիքի նկատմամբ իշխանությունը հոգատար է եղել, որ վերադարձից հետո հեռախոսազրույց է ունեցել Փաշինյանի հետ եւ առաջիկայում էլ հանդիպելու է նրան: Նաեւ իր էջում գրառում էր արել. «Շնորհակալություն հայտնել Իլհամ Ալիեւին՝ այն դեպքում, երբ Ադրբեջանի բանտերում ունենք բռնի եւ ապօրինի պահվող պատանդներ, ինձ համար անընդունելի է»: Առիթը ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի շնորհակալությունն էր՝ ուղղված Ալիեւին, Դավոսի միջազգային ֆորումի ժամանակ:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՅՑ

ՎԵՆՍԻՆ ՀԱՍՈՒ ԿԴԱՌՆԱ՞, ՈՐ ԿԱՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը երեկ այցելեց Հայաստան, իսկ այսօր կմեկնի Ադրբեջան՝ տարածաշրջանային այցը շարունակելու: Նա Հայաստան է ժամանել Իտալիայից, որտեղ, ընտանիքի հետ, հետեւում էր ձմեռային օլիմպիական խաղերին: Նախատեսված է ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյայի հանդիպումը Հայաստանի վարչապետի հետ: Վենսի երեւանյան օրակարգը մինչեւ վերջին պահը հրապարակված չէր, հայտնի չէր, թե նա էլ ինչ հանդիպումներ է ունենալու Երեւանում, միայն պարզվել էր, որ չի այցելելու Ծիծեռնակաբերդի հուշահամալիր եւ Ամենայն հայոց կաթողիկոսին, չնայած նրան առաջարկել էին դա անել: Խորհրդարանական ընդդիմադիրներն էլ հայտնել էին, որ ԱՄՆ փոխնախագահի հետ հանդիպման հրավեր չեն ստացել: Քաղհասարակության մի քանի ներկայացուցչի հետ կապվեցինք՝ նրանք էլ հրավեր չէին ստացել:

ԱՄՆ-ում արտադրված պաշտպանական սարքավորումներ, ինչպիսիք են զրահաբաճկոններն ու նավակները, եւ ավելին»,- Truth սոցիալական ցանցում գրել էր Դոնալդ Թրամփը:

ԵՊՀ Արեւելագիտության ֆակուլտետի դեկան, թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով Վենսի այցին, դրա շուրջ ծավալվող քննարկումներին, սպասելիքներին, ասում է. «ԱՄՆ փոխնախագահի այցը Հայաստան, ամեն դեպքում, կարող ենք համարել կարեւոր իրադարձություն, դրան էլ գումարած Վենսի կերպարը, որը խոստումնալից քաղաքական գործիչ է, կարող ենք ասել, որ ապագան դեռ առջեւում է, սակայն մեր ժողովրդի ոգեւորությունը, ինչպես նաեւ քաղաքական ուժերի ոգեւորությունը, որը սովորույթ է դարձել մեզանում, եթե մի կողմ դնենք, ապա կարող ենք արձանագրել, որ Վենսը կարող է օվկիանոսը կտրել եւ Հայաստան հասնել արդյունքում, սակայն պետք է նայենք ԱՄՆ-ի պրագմատիկ շահերին: ԱՄՆ-ի շահերն ակնհայտ են՝ Թրիփ, Իրանին սաստել, Ռուսաստան, Չինաստան եւ այլն: Պետք է հասկանալ՝ կարո՞ղ է Հայաստանը, որպես «գերիզոր» դիվանագիտություն վարող պետություն, ունենալ ակնկալիքներ շոշափելի քայլերի հարցում, թե ոչ՝ hօգուտ Հայաստանի: Մասնավորապես՝ Բաքվում պահվող հայ ռազմագերիների հարցը, ի վերջո չմոռանանք, որ Թրիփն ամբողջությամբ պարտադրման հետեւանք է: Հայաստանն իր ապաշնորհ դիվանագիտության արդյունքում հայտնվել է մի ծուղակում, որն ինքն է իր համար լարել՝ ներառելով միջանցքի հարցը: Այս ամենի կոնտեքստում արդյո՞ք Հայաստանը կարող է շոշափելի արդյունքների հասնել, սա է խնդիրը: Վենսը նաեւ հայտնի է իր կրոնական, պահպանողական տեսակով, կրոնական արժեքների հանդեպ հետաքրքրությամբ: Արդյո՞ք քաղաքական մյուս բեւեռը՝ ընդդիմությունը, կարողանալու է Վենսին հասու դարձնել, որ նա այցելել է առաջին քրիստոնեական երկիր, որտեղ քրիստոնյա հոգեւոր հայրերը բանտարկված են եւ, առհասարակ, գտնվում են իշխանությունների թիրախում: Արդյո՞ք կարողանալու են Վենսին հասու դարձնել, որ Հայաստանում կան իրական պատարագներ եւ պատարագներ՝ ըստ Փաշինյանի ցանկության: Այս խնդիրներն ավելի ռեալ հետաքրքրություններ կարող են առաջացնել: Հակառակ դեպքում Վենսի այցը այց է՝ հանուն ԱՄՆ-ի»:

Վենսի այցի մասին առաջին անգամ խոսվեց հունվարի վերջին, այդ մասին տեղեկացրեց Սպիտակ տան ղեկավարը՝ ասելով, որ այցի նպատակը խաղաղության ջանքերը շարունակելն ու Սյունիքով Ադրբեջանը Նախիջեւանին կապող TRIPP-ն առաջ մղելն է: «Մենք կխորացնենք մեր ռազմավարական գործընկերությունն Ադրբեջանի հետ, կկնքենք խաղաղ միջուկային համագործակցության հիանալի համաձայնագիր Հայաստանի հետ, պայմանագրեր՝ մեր կիսահաղորդիչներ արտադրողների համար, Ադրբեջանին կվաճառենք

միայն պրագմատիկ, ռացիոնալ հարցերի համար: Ակնհայտ է, որ առաջնային հարցն ամերիկյան կողմի համար Թրամփի երթուղին է: Դրան էլ գումարած Իրան-ԱՄՆ բանակցությունների կոնտեքստում Իրանին մեկուսացնելու շարունակությունն է, Ռուսաստանի Դաշնությանն այստեղից դուրս մղելու պրոցեսն է եւ այլն: Վենսը կարող է անել հայտարարություններ, որոնցից հայ ժողովրդի հավաքական զգայարանները կարող են շոյվել, հայ հանրությունը կարող է ուրախանալ, մանավանդ՝ իշխանական քարոզչության

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վենսի այցերի աշխարհագրությունը

Երեկ պաշտոնական այցով Հայաստան ժամանեց ԱՄՆ փոխնախագահ Ջեյմս Դեյվիդ Վենսը՝ կնոջ՝ Ուշա Վենսի հետ: Նրանց հետ էին նաեւ երեխաները՝ Էվանը, Վիվեկը եւ դուստրը՝ Միրաբելը: Նրանք փետրվարի 6-ից մասնակցում էին ձմեռային օլիմպիական խաղերի բացման արարողությանը, ընտանյոք հետեւում էին խաղերին, հանդիպում ամերիկյան մարզիկների հետ եւ այլն: Փոխնախագահի պաշտոնում Հայաստանը երեւի 3-րդ կամ 4-րդ երկիրն է, որ Ջեյ Դի Վենսը պաշտոնապես այցելում է: Նա երեք անգամ եղել է Իտալիայում՝ անցյալ գարնանը, երբ Ֆրանցիսկոս պապը երկարատեւ բուժումից հետո դուրս էր գրվել հիվանդանոցից, կյանքի վերջին օրերին Վենսը Վատիկանում Պապին հանդիպեց: Երկրորդ անգամ Ջեյ Դի Վենսն Իտալիայում էր՝ դարձյալ Վատիկան այցի առթիվ՝ արդեն Լեւոն XIV պապի գահակալման արարողությանը մասնակցելու: Այժմ երրորդ անգամ Իտալիայում էր՝ օլիմպիական խաղերի կապակցությամբ, ընտանյոք հանդերձ, որտեղից էլ ժամանեց Հայաստան: Իտալիայից բացի, պաշտոնական այցով ԱՄՆ երկրորդ դեմքի ընտանիքն անցյալ ամռանը եղել է Հնդկաստանում, որտեղ երեխաներն ուղեկցել են ծնողներին: Վենսի վերջին օտարերկրյա այցը եղել է 2025-ի աշնանը. նա այցելել է Սուրբ երկիր, եղել է Երուսաղեմում: Վենսն այցելել է քրիստոնեության սրբության սրբոցը՝ Սուրբ Հարության տաճարը Հին Երուսաղեմում, որի 1/3-ի իրավատերը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին է՝ ի դեմս Երուսաղեմի Հայոց պատրիարքության: ԱՄՆ փոխնախագահի պաշտոնում՝ ավելի ցածր մակարդակի այցերով Ջեյ Դի Վենսը Գերմանիայում մասնակցել է Մյունխենի 2025-ի Անվտանգության համաժողովին՝ կանգ առնելով նաեւ Ֆրանսիայում, մասնավոր այցով եղել է Միացյալ Թագավորությունում եւ այցելել է Գրենլանդիայում ԱՄՆ ռազմաբազա:

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ ՍՏԱՆԱԼԸ ՄԵԾ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ Է ԴԱՐՁԵԼ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարությունը, աշխատանքային պայմանագրերի կնքման համար անհրաժեշտ էլեկտրոնային ստորագրությունների ստացման հետ կապված խնդիրների պատճառով, նախատեսել է փոփոխություններ կատարել Աշխատանքային օրենսգրքում՝ փետրվարի 4-ին իշխող ՔՊ խմբակցության հետ քննարկման ժամանակ հայտարարել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը:

Բանն այն է, որ 2026 թվականի հունվարի 1-ից Հայաստանում աշխատանքային պայմանագրերը պետք է կնքվեն բացառապես էլեկտրոնային եղանակով: Դրա համար քաղաքացիները պարտադիր պետք է ունենան էլեկտրոնային ստորագրություն, իսկ այն հնարավոր է ստանալ միայն նույնականացման քարտի (ID քարտ) առկայության դեպքում: Օրենքով նախատեսված է, որ նույնականացման քարտի համար անհրաժեշտ է վճարել 3 հազար դրամ, եւ այն տրամադրվում է դիմելուց հետո 15 օրվա ընթացքում: Բայց նույնականացման քարտ ստանալու համար մարդիկ գրանցվում են, ամիսներով սպասում իրենց հերթին, իսկ ում շատ շտապ է պետք, հավելյալ գումար են վճարում, բայց անգամ այդ դեպքում էլ հնարավոր չէ քարտը շուտ ստանալ:

Մեզ դիմած հրազդանցիներն ասացին, որ նույնականացման քարտ ստանալն իսկական պահուհաս է դարձել իրենց համար: Քանի որ ՆԳՆ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության ստեղծմամբ ու համակարգում իրականացվող օպտիմալացման համատեքստում կրճատվեցին անձնագրային բաժինները՝ Չարենցավանի անձնագրային բաժինը տեղափոխվեց Հրազդան, Հրազդանի անձնագրային բաժինն այժմ սպասարկում է մոտ 120 հազար բնակչության՝ Հրազդանի, Չարենցավանի, Ծաղկաձորի եւ դրանց հարակից գյուղական համայնքների բնակչությանը: Հազարավոր քաղաքացիների համար Հրազդան հասնելը նաեւ լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն է առաջացնում, չնայած Չարենցավանում գործում է անձնագրայինի շրջիկ մեքենա, սակայն դա էլ խնդրի լուծում չի հանդիսանում:

Անձնագրերի հետ կապված քաշքշուկից դեռ գլուխ չհանած, հիմա էլ նույնականացման քարտի համար են քաղաքացիները կրակն ընկել: Հրազդանցիները նույնականացման քարտը շուտ ստանալու համար Հրազդանից անգամ Իջեւան են գնում հասնում: Սոցիալական հարթակներում բուռն քննարկվում է այս խնդիրը: Օգտատերերից մեկը գրել է. «Եթե Հրազդանի անձնագրային բաժին մոտենաս կամ օնլայն փորձես գրանցվել, հերթագրվել, քո հերթը կգա լավագույն դեպքում մայիսին: Այլ տարբերակը Սեւանի, Գավառի, Դիլիջանի, Իջեւանի կամ Մարտունու անձնագրայիններում գրանցվելն է: Այսինքն, մենք մեր քաղաքում չենք կարող ավելի շուտ ստանալ քարտը ու դրա պատճառով մեր ժամանակի եւ ֆինանսների հաշվին պիտի երկու անգամ այլ քաղաք գնանք ու գանք: Ո՞նչն է պատճառը: Պատճառը ծանրաբեռնվածությունն է, իսկ այդ ծանրաբեռնվածությունը չէր լինի, եթե ժամանակին արագի մեջ Չարենցավանի անձնագրայինը չփակեին ու չմիացնեին Հրազդանին: Այս հարցով մի քանի անգամ դիմել ենք, բայց անօգուտ...»:

Մեկ այլ օգտատեր էլ գրում է, որ Հրազդանում նույնականացման քարտի համար 3 հազար 500 դրամ են ուզել, Սեւան քաղաքից է ստացել նույնականացման քարտը, վճարել 3 հազար դրամ: Անուշ Գրիգորյանը գրում է. «20 հազար դրամ եմ մուծել, որ շուտ վերցնեմ՝ չտվին, ես հո չեմ խաբում, հունվարից մի տեղ գործ եմ ճարել, տեղը չկորցնելու համար գնում-գալիս եմ, մինչեւ այդ քարտը վերցնեմ: Չեն կարում գրանցել, դե արդեն պատկերացրեք իմ շահագրգռված լինելը...»:

Նույնականացման քարտ ստանալու համար ինչո՞ւ պետք է հրազդանցիները հասնեն Դիլիջան կամ Մարտունի. հարցն ուղղեցինք Ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության Հրազդանի անձնագրային բաժնի պետ Վալեր Եսայանին: Հարցը լսելուց հետո Եսայանն ասաց, որ քիչ ուշ կապ կհաստատի մեզ հետ: Ժամեր անց կրկին զանգահարեցինք, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ի՞ՆՉ ԻՄԱՍՏ ՈՒՆԻ՝ ԳԺՏՎԵԼ ԳՈՐԾԻՔԻ ՀԵՏ, ԵԹԵ ԻՐԱԿԱՆ ԹՇՆԱՄԻԴ ԱՅԴ ԳՈՐԾԻՔԸ ԲԱՆԵՑՆՈՂՆ Է

Նա հանդիպեց ՌԴ մի քանի պաշտոնատար անձանց, այդ թվում՝ Դաշնային խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի, ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի, «Ռոսատոմ»-ի գլխավոր տնօրեն Սերգեյ Լիխաչովի հետ: Այդ հանդիպումների արդյունքում Հայաստանի համար ոչ մի շահեկան պայմանավորվածություն ձեռք չբերվեց, ոչ մի պայմանագիր չստորագրվեց, բայց «քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր»: Իսկ Սիմոնյանին հետաքրքրող հարցն իշխանության մնալն է, իրենց իշխանության վերարտադրությունը: Նրա մոսկովյան այցը նախընտրական էր, եւ քննարկված հարցերն ու հաջողությունները եւս այս ոլորտից են: Սիմոնյանն իր ղեկավարությանը կարող է զեկուցել, որ ինքը հասավ իր առջեւ դրված խնդրի լուծմանը՝ապահովել Ռուսաստանի իշխանության լոյալությունը Հայաստանի գործող իշխանության նկատմամբ, Ռուսաստանի իշխանության ներկայացուցիչներին համոզել, որ Հայաստանի իշխանությունը թշնամի չէ Ռուսաստանին, չի պատրաստվում խզել կապերը նրա հետ, հակառակը՝ պատրաստ են բաց երկխոսության, առկա խնդիրների քննարկման եւ լուծման: Եթե աշխարհաքաղաքական վեկտորի փոփոխություն չեն նախաձեռնում, այդ դեպքում ինչո՞ւ պետք է Ռուսաստանը որեւէ խոչընդոտ հարուցի իրենց վերարտադրության համար, սատարի այլ քաղաքական ուժերի:

Այն, որ Սիմոնյանի այցը նախընտրական էր, որեւէ կասկած չկա, այցը տեղի ունեցավ ընտրություններից 4 ամիս առաջ, այդ ընտրություններին իշխանության ամենաակտիվ նախապատրաստության փուլում: Եվ Սիմոնյանի բոլոր հայտարարություններն էլ ուղղված էին նրան, որ փարատեն Ռուսաստանի կասկածներն առ այն, որ ՀՀ իշխանության վերարտադրվելու դեպքում երկու երկրների հարաբերությունները կվատանան, Հայաստանը կխզի հարաբերությունները Ռուսաստանի հետ, դուրս կգա ՀԱՊԿ-ից եւ ԵԱՏՄ-ից: «Չեմ ուզում, որ այստեղ՝ Ռուսաստանում, լինի այնպիսի ընկալում, թե Հայաստանը փորձում է ինչ-որ կերպ որեւէ բան անել Ռուսաստանի դեմ: Մենք՝ Ռուսաստանի դեմ, մեզ համար բարեկամական դաշնակից պետության դեմ... ուզում եմ ձեզ հավաստիացնել, որ... մեզ մոտ նման ընկալում չկա եւ չի լինի... Դա սխալ է այն ամենի համատեքստում, ինչ մենք արդեն ունենք, եւ ինչ գոյություն ունի»,- ասել է Սիմոնյանը Լավրովի հետ հանդիպման ժամանակ: Այո, սա ասել է մի իշխանության ներկայացուցիչ, որոնք առավոտից իրիկուն խոսում են Ռուսաստանի կողմից Հայաստանի դեմ սանձազերծված հիբրիդային պատերազմի մասին, մի իշխանության ներկայացուցիչ, որը պաշտոնապես դիմել է ԵՄ-ին եւ ԱՄՆ-ին՝ իրենց նյութական եւ կազմակերպչական օժանդակություն տրամադրելու, որ ռուսական ուժերի դեմ պատերազմում հաղթող դուրս գան: Փաշինյանն ամեն անգամ հայտարարում է, որ ինքը պատրաստ է հենց այսօր լքել ԵԱՏՄ-ն, եթե դրա հաջորդ օրը ԵՄ-ն Հայաստանին ընդունի իր շարքերը, որ Հայաստանի տեղը զարգացած ժողովրդավարական պետությունների, նկատի ունի՝ ԵՄ-ի կողքին է, եւ ոչ թե հետամնաց ավտորիտար ռեժիմների, նկատի ունի՝ ՌԴ-ին եւ նրա դաշնակիցներին:

Իսկ ռուսները միթե չգիտեն, թե ինչ են ասում Հայաստանի իշխանությունները, ինչպիսի վերաբերմունք ունեն նրանք Ռուսաստանի նկատմամբ: Միթե հավատում են Ալեն Սիմոնյանի հայտարարություններին: «Մենք շահագրգռված ենք բարեկամության դարավոր ավանդույթների ամրապնդմամբ: Դա համապատասխանում է մեր ժողովուրդների եւ պետությունների շահերին եւ զգալի ներդրում է կատարում խաղաղ եւ բարգավաճ Հարավային Կովկասի կառուցման գործում»,- Սիմոնյանի հետ հանդիպման ժամանակ շեշտել է Մատվիենկոն: Նրա մյուս զրուցակիցներն էլ են նույնքան բարեկամակաբար տրամադրված: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է Ռուսաստանն աչք փակում Հայաստանի իշխանության նման երկդիմի վարքագծի վրա, միթե չեն վիրավորվում, երբ իրենց խաբում են կամ փորձում են հիմարի տեղ դնել եւ, ընդհակառակը՝ խոսում են բարեկամությունն ամրապնդելու մասին:

Իրականում, Ռուսաստանի իշխանությունները գիտեն, թե ինչ է կատարվում Հայաստանում, եւ ինչ արտաքին քաղաքական կուրս է իրականացնում ՀՀ իշխանությունը: Բայց նրանք նաեւ գիտեն, որ Հայաստանի իշխանություն կոչվածը գտնվում է արտաքին կառավարման տակ, այդ մարդիկ չեն ներկայացնում Հայաստանի պետական եւ հանրային շահը եւ կառավարվում են իրենց արտաքին տերերի կողմից, նրանց ինչ հրահանգում են, այն էլ անում են: Հիմա ի՞նչ իմաստ ունի գժտվել գործիքի հետ, եթե քո իրական թշնամին այդ գործիքը բանեցնողն է: Ընդհակառակը, եթե Սիմոնյանը կամ Փաշինյանը փորձում են բարեկամություն խաղալ, կեղծավորություն անել, թող անեն, դրանից վնաս չկա: Ռուսաստանի համար կեղծ եւ շինծու բարեկամությունը գերադասելի է բացահայտ թշնամությունից: Միեւնույն է՝ Ռուսաստանի իշխանությունն ամենամեծ ցանկության դեպքում էլ չի կարող խոչընդոտել Հայաստանի գործող իշխանության վերարտադրությանը, դրա համար չունեն ո՛չ կազմակերպչական, ո՛չ էլ այլ ռեսուրս: Իսկ արեւելյան ասացվածքն ասում է՝ այն ձեռքը, որը չես կարող կտրել, պետք է համբուրել եւ դնել գլխին:

Ռուսաստանի իրական վերաբերմունքը Հայաստանի իշխանության նկատմամբ Սիմոնյանի այցի օրերին արտահայտել էր ՌԴ Պետդումայի պատգամավոր Կոնստանտին Զատուլինը: Անդրադառնալով Բաքվում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության դեմ արձակված դատավճռին՝ նա գրել էր. «Զարմանալի զուգադիպություն. դատավճիռը հրապարակվեց, երբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ միասին Էմիրություններում ստացան Մարդկային եղբայրության համար մրցանակը: Փաշինյանի եւ Ալիեւի եղբայրությանը կարելի է չկասկածել, ինչպես որ կասկած չկա Փաշինյանի դավաճանության նկատմամբ, որը թույլ տվեց Լեռնային Ղարաբաղի հանձնումը եւ իր հայրենակիցների վտարումն իրենց պատմական հողերից: Հայաստանի կառավարությունը եւ Նիկոլ Փաշինյանը, որոնք վերընտրվելու համար թակում են Թուրքիայի, ԱՄՆ-ի, արեւմտյան երկրների եւ նույնիսկ Ռուսաստանի դռները, մատը մատին չեն տվել՝ իրենց հայրենակիցներին, մեր ընկերներին եւ բարեկամներին գերությունից ազատելու համար: Այդ ամոթը հավերժ կմնա նրանց հետ»: Այս հայտարարությունից հետո ոչ թե Հայաստանի, այլ Ադրբեջանի ԱԳՆ-ն Ադրբեջանում Ռուսաստանի դեսպանին կանչեց՝ բողոքի նոտա հանձնելու: Հայաստանը Ռուսաստանից բողոք չունի, առաջիկա 4 ամիսներին՝ միայն բարեկամություն:

ԱԺ նախագահի պաշտոնը զբաղեցնող Ալեն Սիմոնյանը կարող է համարել, որ ՌԴ իր երկօրյա պաշտոնական այցը փայլուն արդյունք ունեցավ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵԹԵ ԹՄԲՈՒԿ ԵՔ...

Այս օրերին հիրավի քաջություն է պետք՝ հայտարարելու, որ դու, չգիտեմ ինչ խոչընդոտներ հաղթահարելուց հետո, իրավունք ես ձեռք բերել՝ տեղ զբաղեցնելու ՔՊ-ի նախընտրական ցուցակում: Վերջին օրերին այդպիսի մի քանի հայտարարություններ աչքովս ընկան, իսկ թեկնածուներից մեկն էլ այնքան հանդուգն էր գտնվել, որ ՔՊ-ի շտաբի պետի տեղակալ (տեղակա՞լ) Վահագն Ալեքսանյանին թույլ էր տվել հրապարակել իրենց համատեղ լուսանկարը: Հներից էլ կան, բայց նաեւ նոր դեմքեր կան, որոնք դեռ լավ չեն պատկերացնում ՔՊ-ի ցուցակում հայտնվելու տխուր հետեւանքները:

Ես ամենեւին էլ չեմ սպառնում այդ մարդկանց: Պարզապես կուզենայի, որ նրանք նախապես իմանան, որ ՔՊ-ի ցուցակ ընկնելը հավասարազոր է իրենց ունեցած մասնագիտությունները դավաճանի, խաբեբայի, հողատուի, գործակալի, աղանդավորի մասնագիտությունների հետ փոխելուն: Գալով ՔՊ-ի ցուցակ՝ գալիս եք Ալեն, Ռուբեն Ռուբինյան, Վահագն Ալեքսանյան, Հայկ Կոնջորյան, ինչու ոչ՝ Արարատ Միրզոյան, Վահագն Խաչատուրյան, Անդրանիկ Քոչարյան դառնալու: Բա ձեզ պե՞տք ա... Էլ չեմ ասում, որ մեծ ֆինանսական բեռի տակ եք ընկնելու, եթե բախտներդ բերի եւ ստուգարքը հանձնելուց հետո դառնաք «ՔՊ-ի ցուցակի թեկնածու»: Ձեզ պե՞տք ա՝ 1.5 միլիոն փող տաք, որ, ենթադրենք, Ռոմանոս Պետրոսյանից մի համար վերեւ լինեք: Բայց, ասեմ, կամքը ձերն է... Եթե որոշել եք Ռոմանոս Պետրոսյան դառնալ, ես ոչինչ անել չեմ կարող:

Գոնե գիտե՞ք, թե ինչ ստուգարք եք հանձնելու: Առաջին կետով ձեզնից պահանջելու են «սրտիկ» անել: Եթե չկարողացաք՝ տեղում կտրում են: Այնպես որ, այդ վարժությունը շատ պարապեք: Ասում են՝ մի աղջիկ հրաշալի «սրտիկ» է ցուցադրել, բայց, չգիտես ինչու, ոչ թե «սրտիկի» ծակից է նայել Վահագն Ալեքսանյանին, այլ՝ կողքից, կտրել են... Ստուգարքի երկրորդ կետով դիմորդից պահանջվում է դատարկ թմբուկ երեւալ: Դե գիտեք, երեւի, որ ՔՊ-ն «կրթվելը նորաձեւ է» շարժումից հետո նոր շարժում է սկսել՝ «թմբուկ լինելը գիրք կարդալուն հավասար բան է» խորագրով: Դուք պետք է ապացուցեք, որ իսկապես դատարկ թմբուկ եք եւ ՔՊ ցուցակի հետ կապված ավելորդ տեսլականներ չունեք: Մի հատ խփում են, ու նայած թե ինչ ձայն դուրս կգա ձեր միջից, որոշում են՝ ներառնե՞լ ձեզ ցուցակում, թե՞ ոչ: Եվ ստուգարքի 3-րդ՝ ամենահեշտ պահանջը. պետք է գոնե մեկ անգամ Աստվածաշունչը կարդացած լինեք մինչեւ վերջ: Սերտել եք, թե ոչ՝ էական չէ: Նույնիսկ ավելի լավ է սերտած չլինեք, որովհետեւ ՔՊ-ի առաջնորդն արդեն սերտել է, եւ դա բավական է ասելու համար, որ նրա բոլոր «հետեւորդներն» են սերտել: Աստվածաշնչի հետ կապված բոլոր հարցերն աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն է տալիս: Վահագն Ալեքսանյանին չեն վստահում, որովհետեւ սա մի անգամ, իբր ուզեցել էր Վեհափառին բան ասել, քրիստոնեության մեջ ինչ կար-չկար, խառնել էր իրար, թե բա՝ Վեհափառն ուզում է մեր Եկեղեցու անունը փոխել: Թե սրա այդ խոսքի վրա ինչ աղմուկ բարձրացավ ՖԲ-ում, նկարագրելու չէ: Մի խոսքով, ինչպես պայմանավորվեցինք, Արայիկ Հարությունյանին համարձակ պատասխանում եք, որ Աստվածաշունչը ծայրից ծայր կարդացել եք ու ոչինչ չեք հիշում:

Ստուգարքին հաջորդող քայլերի մասին վերեւում արդեն ակնարկեցի... Մտնում եք ՖԲ, տեղադրում արդեն մշակված տեքստը՝ ՔՊ ցուցակում ընդգրկվելու ձեր հայտի ընդունման մասին, եւ սպասում քյոհնա ՔՊ-շնիկների քվեարկության արդյունքներին՝ վերցնե՞լ ձեզ ցուցակ, թե՞ մերժել: Ի դեպ, շատ հանգիստ սպասել էլ պետք չէ: Մի հատ շուրջներդ նայեք եւ տեսեք, թե ինչ հանրահայտ ՔՊ-շնիկներ ու «հեղափոխականներ» են «կտրվում» ստուգարքից եւ դուրս մնում ՔՊ ցուցակից: Ներկուսակցական կոռուպցիան հո պոզով-պոչով չի՞ լինում: Վոժդն է այնտեղ ամեն ինչ որոշում, իսկ եթե կուսակցությունում «վոժդ» կա, դա արդեն ինքնին կոռուպցիա է:

Չգիտեմ, այս հոդվածն ինչ-որ չափով կօգնի՞ մեր քաղաքացիներին՝ ՔՊ ցուցակ մտնելուց առաջ լավ մտածել կամ, ընդհակառակը, ռիսկով գնալ եւ դիմել ՔՊ-ին՝ ուսապարկ գրվելու համար: Ինձ համար ընդունելի է այն որոշումը, որ կկայացնի քաղաքացին: Իմ գործը չկողմնորոշվածներին նախազգուշացնելն էր:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՏԻՄ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՇԱՌԵԼՈՒ ՁԵՎԸ ԳՏԵԼ Է՝ ԱՌՁԵՎՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ



Հայաստանի համայնքներում հիմա մասնակցային բյուջետավորման գործընթաց է սկսվել, որը թույլ է տալիս քաղաքացիներին՝ համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ, մասնակցել հանրային ռեսուրսների բաշխմանը եւ բյուջետային գործընթացներում կայացվող որոշումներին, որոնք անմիջական ազդեցություն ունեն իրենց կյանքի վրա: Ինչ է դա իրենից ներկայացնում:

Մասնակցային բյուջետավորման առաջարկ-հայտ կարող է ներկայացնել տվյալ համայնքի 16 տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ: Այդ գործընթացում ներկայացված առաջարկ-նախագծերը քննարկում եւ համապատասխան որոշում է կայացնում համայնքապետի ստեղծած հանձնաժողովը, որն առաջնորդվում է համայնքի ավագանու սահմանած չափանիշներով: Քաղաքացիների հայտ-առաջարկների վերաբերյալ իրականացվում է էլեկտրոնային քվեարկություն: Քվեարկելու իրավունք ունեն ՏԻՄ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի չափանիշին համապատասխանող տվյալ համայնքի բնակիչները: Քվեարկության յուրաքանչյուր մասնակից կարող է քվեարկել առավելագույնը 3 առաջարկ-նախագծի օգտին: Քվեարկության ընթացքը եւ արդյունքները հրապարակվում են համայնքի պաշտոնական կայքում:

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում հունվարի 20-22-ը՝ 3 օր շարունակ, իրար հաջորդող 3 տեղեկատվական նյութ է տեղադրվել մասնակցային բյուջետավորման գործընթացի վերաբերյալ: Բերդի համայնքապետարանի ինտերնետային կայքում փետրվարի 6-ին զետեղվել է տեղեկատվություն, որ փետրվարի 5-ին համայնքապետարանում կայացել է մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի չորրորդ նիստը: Հանձնաժողովը գնահատել է քաղաքացիների կողմից ներկայացված հայտ-առաջարկների համապատասխանությունը սահմանված չափանիշներին, ապա սկսվել է հանրային քննարկումների եւ լսումների փուլը: Հանրային քննարկում անցած առաջարկների քվեարկության փուլը կմեկնարկի փետրվարի 16-ին եւ կշարունակվի մինչեւ փետրվարի 20-ը:

Նոյեմբերյանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ հունվարի 30-ին համայնքապետարանի նիստերի դահլիճում կայացել է մասնակցային բյուջետավորման ծրագրի շրջանակում կազմակերպված հանրային քննարկում: Ներկայացվել է 19 ծրագիր-գաղափար, որոնցից 12-ն անցել է քվեարկության փուլ, 7 առաջարկ մերժվել է ծրագրային չափորոշիչներին չհամապատասխանելու հիմքով: Նախագծերի էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է փետրվարի 2-ին, կավարտվի փետրվարի 9-ին: Ակնհայտ է, որ մասնակցային բյուջետավորման հետ կապված բնակիչների այս ակտիվությունը հրահրվել է իշխանության կողմից, իբր թե որպես ժողովրդավարության դրսեւորում եւ իրենց համայնքի բյուջեի ծախսերին քաղաքացիների մասնակցություն:

Իրենց հուզող հարցը լուծելու համար առաջարկն անցկացնելու նպատակով առաջարկի հեղինակներն իրենց բարեկամների, ծանոթների շրջանում քարոզչություն են անում, խնդրում, համոզում՝ քվեարկել իրենց առաջարկի օգտին: Հայտարարում են, որ մասնակցային բյուջետավորումը հարթակ է՝ համայնքի բնակիչների նախաձեռնողականությունը խթանելու, գաղափարները լսելի դարձնելու եւ դրանք գործնական քայլերի վերածելու համար: Սակայն քաղաքացիները մասնակցային բյուջետավորմամբ մասնակից են դառնում համայնքի բյուջեի մի փոքր մասի ծախսերին, մի քանի տասնյակ միլիոն դրամով իրականացվող հրատապ ծրագրերին: Սակայն քաղաքացիներն ինչո՞ւ տեր չեն կանգնում իրենց համայնքի ողջ բյուջեին, ՀՀ պետական բյուջեին: Պետբյուջեից միլիարդավոր դրամների պարգեւավճարներ են բաժանվում ոչ արդյունավետ աշխատող պաշտոնյաներին, նույն համայնքների բյուջեից պարգեւավճարներ են տրվում:

Եթե սահմանվեին ԱԺ պատգամավորներին, համայնքի ավագանու անդամներին ընտրողների կողմից հետկանչի իրավական մեխանիզմներ, ապա պատգամավորները, ավագանու անդամներն ավելի շատ հաշվետու կլինեին ընտրողներին, որպեսզի պետական, համայնքի բյուջեն ծախսվեր նպատակային, հանրապետության եւ համայնքների կարեւոր հիմնահարցերը լուծելու համար:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՐԶՎԵՑ՝ ԱՍՖԱԼՏՆ ԷԼ ՄԻՖ Է

Երեւանում եւ ողջ հանրապետությունում այս իշխանության միակ «ձեռքբերումը»՝ ասֆալտը, խայտառակ վիճակում է հայտնվել. ճանապարհներն այնպես են քանդվել, որ առաջացել են մեծ ու խորը փոսեր, որոնք վտանգ են ներկայացնում թե՛ վարորդների, թե՛ հետիոտների համար: Այդ փոսերը եւ կենտրոնական փողոցներում են, եւ երկրորդային ու բակային հատվածներում: Վարորդները պնդում են, որ ձյան դեմ պայքարում ինչ-որ քիմիկատներ են շաղ տվել, դա է այս ավերածությունների պատճառը:

«Ունենք մեծ ծավալի փոսալցման աշխատանքներ: Շաբաթ եւ կիրակի օրերին կսկսվեն բուն փոսալցման աշխատանքները»,- անդրադառնալով թեմային՝ հայտարարել է Տիգրան Ավինյանը: Նրա խոսքով՝ ասֆալտի քայքայումը պայմանավորված է նրանով, որ ձյունը հալեցնելու նպատակով փողոցներում աղ շատ են լցրել: Բայց ամեն տարի էլ աղ լցնում են, սակայն դրանից ասֆալտն այսքան արագությամբ չէր քայքայվում, ուրեմն այն անորակ է եղել ի սկզբանե, եւ ձյան ու սառույցի դեմ պայքարն էլ անգրագետ ձեւով են արել:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար **Մանուկ Սուքիասյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, նկատում է. «Ասֆալտը դարձրել էին մատի փաթաթան՝ էսքան կիլոմետր ասֆալտ ենք արել, էնքան կիլոմետր ասֆալտ ենք արել, բայց եթե մի հատ ձյուն պիտի գա, ու աղից ասֆալտը դառնա զրո, քայքայվի գնա, նշանակում է, որ այն անորակ է: Սակայն, ինչպես դասականն է ասում, ասֆալտն ասֆալտ է: Աղի, ավազի, մյուսների հետ կապված հարցեր առաջանալուց առաջ, նախ, պետք էր համապատասխան չինովնիկների հետ զրուցել, սակայն քանի որ դա էլ չի արվել, կարող էին այս օրերին այդ փոսերը լցնել: Այդ հարցը վաղուց պետք է լուծած լինեին, քանի որ ոչինչ չեն արել, եւ կա հանրային մեծ դժգոհություն, գործակարգավարական նիստի ժամանակ Ավինյանը որոշեց անդրադառնալ թեմային, ինչպես միշտ՝ բոլորը մեղավոր են, բացի իրենցից: Անպատասխանատու կառավարման հետեւանքների հետ գործ ունենք: Միջին վիճակագրական ՔՊ-ականի մոտեցում է սա: ԱՆԻՖ-ի փողերը, որ մսխեցին, այդտեղ ի՞լ էր աղը մեղավոր: Կկվի բնից որ վատ հոտ է գալիս, ուրիշներից է հոտ առնում: Կառավարումը տապալված է, եթե այսպես շարունակվի, ամբողջ քաղաքի ասֆալտն է քայքայվելու: Չի բացառվում նաեւ, որ չափից շատ են աղ եւ ավազ լցրել, սակայն մի բան հստակ է, որ հատկապես բակային տարածքներում խայտառակ սառցակալած վիճակ էր, ոչինչ չարվեց, բանը հասավ նրան, որ եղանակը տաքացավ, ու արեւը հալեցրեց սառույցը: Ամեն բան թողել են իրավիճակին, իրենց ապիկարությունն ու դեմագոգությունը բարդում են այլոց վրա, արդեն՝ նաեւ երեւույթների: Ռիսկերի գնահատում գոյություն ունի, եւ դժվար չէ ենթադրել, որ ամեն տարի ձմռանը Հայաստանում կարող է ձյուն տեղալ, ինչի համար համապատասխան կանխարգելիչ աշխատանքներ են հարկավոր: Բայց, ինչպես տեսնում ենք, այս մարդկանց գործը միայն «Էրեբունի-Երեւան», ֆեստիվառներ, փառատոներ կազմակերպելն է, միլիարդներ վատնելը, տոնածառի համար ամեն տարի միլիոններ են ծախսում՝ 20 օրվա համար, գործուղումներ, վայելքներ. այս հարցերում չեմպիոններ են, սակայն ինչ վերաբերում է բուն գործառույթներին, տկար են, ոչինչ չեն կարողանում անել եւ, որ ամենահետաքրքիրն է՝ փաշինյանական ոճով չես հասկանում, թե ումից են դժգոհում, ում վրա են մուննաթ գալիս: Տպավորություն է, որ իրենք իրենց ընդդիմախոսներն են»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Եվրոպայում «դիվանագիտության ճգնաժամի շաբաթն է»

Ընթացիկ շաբաթը Եվրոպայում կարելի է համարել ճգնաժամային շաբաթ: Այս շաբաթվա ընթացքում եվրոպական դիվանագիտությունը դիմացկունության քննություն է հանձնելու՝ գրում է Politico պարբերականը: Շաբաթը լինելու է չափազանց հագեցած՝ ԵՄ առաջնորդները քննարկելու են ամենաբարդ հարցերից մեկը, որն այսօր ծառացած է Եվրոպայի առաջ՝ ինչպես անել, որ «հին աշխարհը» դառնա ուժեղ խաղացող՝ ավելի ու ավելի դաժան դարձող ժամանակակից աշխարհում:

«Առաջիկա օրերը ցույց կտան, թե կկարողանամ արդյոք Եվրոպան շրջադարձ կատարել ու դառնալ իրապես ավելի միասնական, հասուն եւ անկախ»,- հարց է տալիս հեղինակը՝ հղում անելով Իտալիայի նախկին վարչապետ Էնրիկո Լետային: Այսպես, փետրվարի 11-ին կայանալու է ԵՄ անդամ պետությունների ռազմական նախարարությունների ղեկավարների հանդիպումը, որը նվիրված է Ուկրաինային օգնությանը: Այդ հանդիպման ժամանակ Կիեւի վարչակարգի ներկայացուցիչները ԵՄ ներկայացուցիչներից հերթական անգամ խնդրելու են զենք եւ փող: Կիեւին մասնավորապես անհրաժեշտ են զենիթահրթիռային համակարգեր, նեռառյալ «Պատրիոտ» համակարգեր: Նախատեսվում է նաեւ քննարկել Ուկրաինային ԱԹՍ-ների մատակարարման հարցը: Միաժամանակ մտքեր են փոխանակելու, թե ինչպես Եվրոպայի պաշտպանունակությունը դարձնել ավելի ուժեղ՝ Միացյալ Նահանգների՝ անդրատլանտյան համագործակցությունից երես թեքելու ֆոնին: Փետրվարի 12-ին նախատեսվում է ԵՄ տնտեսական հարցերով գագաթնաժողովը: Այստեղ արդեն Ուկրաինայի հարցը կգնա երկրորդ պլան, քանի որ եվրոպացի առաջնորդները ստիպված են լինելու քննարկել կուտակված տնտեսական խնդիրները: Մասնավորապես, օրակարգում Վաշինգտոնի հետ առեւտրային համաձայնագրի հարցն է: Եվրոպացի առաջնորդները շատ են ցանկանում, որ Եվրոպան լինի մրցունակ, սակայն թե ինչպես հասնեն դրան, չեն պատկերացնում: Փետրվարի 13-ին մեկնարկում է Անվտանգային հարցերով Մյունխենյան կոնֆերանսը, որի ժամանակ եւս մեկ անգամ քննարկելու են Ուկրաինայի եւ անդրատլանտյան համագործակցության ապագայի հարցերը: Բոլորին հետաքրքրելու է այն հարցը, թե արդյո՞ք Եվրամիությունը կկարողանա առանց Վաշինգտոնի ոտքի կանգնել եւ մենմենակ ապահովել իր անվտանգությունն ու շահերը: Մյունխենյան կոնֆերանսին մասնակցելու է նաեւ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն, ինչպես նաեւ՝ ամերիկյան Ազգային հետախուզության ղեկավար Թուլսի Հաբարդը: Politico-ն նկատում է, որ եվրոպացիների եւ ամերիկացիների միջեւ երկխոսությունը դյուրին չի լինելու, եւ հնարավոր է, որ «ճգնաժամային շաբաթն» այդպես էլ չտա կարեւոր հարցերի պատասխանները:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ՊԱՏԱՍԽԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏԻ (Չ)ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

Ի մարդ շարունակ գլուխ է գովում, պարծենում, որ ինքն «այս է, այն է, բոլորն իրեն ճանաչում են, իրենց գյուղում անգամ շուն չկա, որ իրեն չճանաչի, ինքը մեծ հեղինակություն է…»: Մի օր լսողներից մեկը չի համբերում. «Այ ընկեր, կարծում ես՝ ձեր գյուղից մարդ չկա՞»: Իմաստը պարզ է. քիչ խոսա, թե չէ շատ բան կպարզվի:

Լոռու մարզպետի պաշտոնական կայքէջից տեղեկացանք, որ «Լոռին զարգանում է ժամ առ ժամ»: Լուրը, անկեղծ ասած, ոգեւորիչ էր, եւ մենք «Հրապարակում» ոչ միայն հոդվածով հանդես եկանք, այլեւ որոշեցինք մարզպետից հարցազրույց վերցնել եւ հարցերի շրջանակն էլ կազմեցինք ու ուղարկեցինք իրեն, որ իմանա, թե ինչի մասին ենք զրուցելու: Ի վերջո, եթե Լոռին իսկապես զարգանում է ժամ առ ժամ, հանրությունն իրավունք ունի իմանալ՝ ինչպե՞ս, ինչի՞ հաշվին եւ ի՞նչ ուղղություններով է զարգանում: Իսկ պաշտոնյայի դեպքում էլ հարցազրույց տալը համապետական սփռում ունեցող լրատվամիջոցին ոչ թե հաճույքի կամ պարապությունը հաղթահարելու միջոց է, այլ օրենքով սահմանված պարտականություն: Եվ մենք իրենից չէինք պահանջում մեզ անձնական լավություն անել, այլ ուզում էինք, որ պետական պաշտոնյան հարգի օրենքը: Մանավանդ որ ժամանակին ինքը թղթակցել է «Հրապարակին»՝ սպորտային լուրեր է գրել «Հրապարակի» համար եւ անծանոթ չէ մեր լրատվամիջոցին:

Իսկ մարզպետին ուղղված հարցերը պարզ էին, ու առանձնապես մեծ բարդություն չէր ներկայացնում դրանց պատասխանելը.

1. Ի՞նչ նշանակալից գործեր են արվել Ձեր՝ մարզպետ նշանակվելու այս կարճ ժամանակահատվածում, որոնք Ձեզ հիմք են տվել «Լոռու մարզը զարգանում է ժամ առ ժամ» լավատեսության համար:

2. Ի՞նչ նոր աշխատատեղեր են բացվել Ձեր՝ մարզպետ նշանակվելուց հետո, ի՞նչ ներդրումներ են կատարվել մարզում, ի՞նչն է խանգարում նոր աշխատատեղերի բացմանն ու ներդրումների հոսքին:

3. Ի՞նչ ճակատագիր է սպասվում Լոռու նախկին արտադրական հզորություններին, որոնց մի մասն աշխատում է թերի ծանրաբեռնվածությամբ, մյուսները՝ չեն աշխատում: Մարզպետարանը, ՀՀ կառավարությունն այստեղ անելիք ունե՞ն, թե՞ ամեն ինչ մասնավորն է որոշում:

4. Վարչատարածքային բաժանման սկզբունքով հանրապետությունով մեկ խոշորացում գնաց համայնքների, աշնանն էլ են նոր խոշորացումներ նախատեսված, մասնավորապես՝ Ստեփանավան, Լոռի բերդ համայնքներն են միանալու: Բայց կարծիք կա, որ հենց մարզպետարաններն են ավելորդ օղակ՝ կառավարության եւ համայնքների միջեւ: Կիսո՞ւմ եք այդ կարծիքը, եւ, ըստ Ձեզ, ի՞նչ հակասություններ ու դժվարություններ կան համայնքապետարաններ-մարզպետարաններ հարաբերություններում:

5. ՔՊ կուսակցության՝ իշխանության գալուց հետո Դուք 5-րդ մարզպետն եք Լոռու մարզում: Ի՞նչ եք կարծում՝ ժամանակ եւ հնարավորություն կունենա՞ք՝ իրագործել Ձեր ծրագրերը: Ինչո՞ւ մարզպետները երկար չեն աշխատում Լոռվա մարզում: Ո՞ր որակների համար են Ձեզ մարզպետ նշանակել՝ ըստ Ձեզ, եւ ի՞նչ բացթողումների համար հեռացվեցին նախկինները:

6. Շենքը, որում այսօր մարզպետարանն է, ծառայել է նաեւ ՀԿԿ Վանաձորի քաղկոմին: Մինչեւ ՔՊ կուսակցության իշխանության գալը, 82 տարի շարունակ այս շենքում մշտապես ստացել եւ կարդացել են բազմաթիվ օրաթերթեր, ամսագրեր: Ութ տարի շարունակ Լոռվա մարզպետարանը ոչ մի թերթ չի ստանում, չեն կարդում, թերեւս՝ մամուլի հետ էլ չեն աշխատում: Չե՞ք ուզում փոխել այս իրավիճակը:

Պատասխանը, սակայն, եղավ խուսափողական. «Աշխատանքային ծանրաբեռնվածության եւ ժամանակի սղության պատճառով առաջիկայում հարցազրույց չի նախատեսվում»:

Մինչդեռ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը հստակ սահմանում է, որ պետական մարմիններն ու պաշտոնյաները պարտավոր են լրագրողի հարցմանը պատասխանել սահմանված ժամկետներում, անկախ նրանից՝ դա արվում է բանավո՞ր, գրավո՞ր, թե՞ էլեկտրոնային եղանակով: Պաշտոնյան, եթե անգամ «խիստ ծանրաբեռնված է», կարող էր էլեկտրոնային փոստով գրավոր պատասխանել մեր հարցերին: Փոխարենը մարզպետը փորձ է անում ներկայացնել իրավիճակն այնպես, կարծես թերթն ինչ-որ բան է իրեն խնդրել, իսկ ինքը մերժել է: Սա արդեն մամուլ-իշխանություն հարաբերությունների խնդիր էլ չէ: Սա վերաբերմունք է հանրության նկատմամբ: Որովհետեւ հարցերը տրվել էին ոչ թե թերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանի կամ լրագրող Գագիկ Անտոնյանի քմահաճույքով, այլ Լոռու բնակչությանը եւ, առհասարակ՝ հանրությանը տեղեկություններ հաղորդելու անհրաժեշտությունից ելնելով: Գուցե այլ մարզերից ի՞լ փորձի փոխանակության գան, լավագույն օրինակից օգտվեն: Չէ՞ որ «ժամառժամ զարգացումը» միայն այցելություններով, կենացներով ու կայքէջում տեղադրված պարզունակ հաղորդագրություններով չի չափվում: Զարգացումը պետք է գնահատի հանրությունը, այլ ոչ թե մարզպետարանի մի ողջ պարապ աշխատակազմ հաղորդագրություններ տեղադրի՝ թոզ փչելով մարդկանց աչքերին եւ աշխատանքի պատրանք ստեղծելով:

Եթե Լոռին իսկապես զարգանում է ժամառժամ, ապա այդ զարգացումն ապահովողները պետք է կարողանան դիմանալ մի քանի պարզ ու կոնկրետ հարցի: Իսկ եթե հարցերից խուսափում են, բնական հարց է ծագում՝ գուցե խնդիրը ոչ թե ժամանակի սղությունն է, այլ բովանդակության պակասը, վա՞խը՝ առանց միջնորդի լրագրողի հետ շփվելուց: Քիչ խոսելը երբեմն իսկապես ավելի ապահով է, հատկապես՝ այն դեպքում, երբ «գյուղից մարդ չկա», ովքեր շատ լավ հիշում են՝ ով ով է եւ ինչի համար է պատասխանատու:

Մենք շարունակում ենք սպասել հարցազրույցի կամ որեւէ այլ ֆորմատով պատասխանի: Որովհետեւ դա ոչ թե մեր մասնավոր խնդրանքն է, այլ՝ հանրության իրավունքը:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ Է ՍՏԵՂԾՎԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԻՆՈՅԻ «ՈՍԿԵ» ՆՄՈՒՇԸ

Դեռեւս 1990-ականներին ռուսական պետական կենտրոնական հեռուստատեսությունը հարցախույզ էր անցկացրել, թե որն է ամենասիրված հայրենական կինոնկարը: Պարզվել է, որ դա «Ադամանդե ձեռքն» է, որը, ի դեպ, սկզբում կոչվել է այլ կերպ՝ «Մաքսանենգները»:

Ֆիլմի հիմքում իրական պատմություն է ընկած, որի մասին սցենարիստներից մեկը՝ Յակով Կոստյուժովսկին, կարդացել է «За рубежом» պարբերականում: Հոդվածում ներկայացված է եղել շվեյցարացի մաքսանենգների պատմությունը, ովքեր թանկարժեք քարեր են տեղափոխել՝ գիպս դրված ձեռքի միջոցով, կոտրվածք ձեւացնելով: Սցենարիստներից Մորիս Սլովոդսկին այս առիթով հիշում է. «Այս անգամ ռեժիսոր Գայդայի հետ մենք որոշեցինք հրաժարվել թե՛ մեր հերոս Շուրիկից, թե՛ նրա հայտնի երեք ուղեկիցներից, որոնք հանդես եկան «Կովկասի գերուհին» եւ «Ի օպերացիա» կինոնկարներում, ինչպես նաեւ՝ Շուրիկի մյուս արկածներում: Շուրիկի տեղը գրավեց խորհրդային տնտեսագետ Սեմյոն Սեյմոնովիչ Գորբունկովը, որը ճակատագրի բերմամբ դարձավ քրեական պատմության հերոս: Պատմություն, որում հայրենական միլիցիան պետք է բացահայտեր մաքսանենգներին:

Յուրի Նիկուլինը, որի համար գրվում էր սցենարը, այդ ամենին կասկածանքով էր վերաբերվում: Նա շատ տարօրինակ էր համարում, որ ոչ թե Խորհրդային Միությունից են թանկարժեք քարեր փորձում տանել, այլ ընդհակառակը՝ ԽՍՀՄ են փորձում բերել թանկարժեք քարեր, այն էլ՝ մաքսանենգ ճանապարհով: Իսկ հետո ստացվեց այնպես, որ ««Ադամանդե ձեռքում» նկարահանվեց նրա ողջ ընտանիքը՝ Տատյանան հանդես եկավ էքսկուրսավարի դերում, իսկ 11-ամյա Մաքսիմը խաղաց այն տղայի դերը, որը քայլում էր ջրի վրայով»: Գեղարվեստական խորհուրդը համառորեն ստիպում էր Գայդային՝ «Կոմս» մականունով մաքսանենգ Գեշա Կոզոդոեւի դերում դիտարկել Գեորգի Վիցինին: Սակայն ռեժիսորը «Ձախորդությունների կղզի» երգի կատարման մեջ տեսավ Անդրեյ Միրոնովի պլաստիկան ու արտիստիզմը եւ հասկացավ, որ ճիշտ ընտրություն է կատարել: Յուրաքանչյուր դուբլը Միրոնովը խաղում էր նորովի՝ չկրկնվելով, մշտապես իմպրովիզացիաներ անելով: Նրան ծափահարում էր ողջ նկարահանող խումբը: Գեշան գլուխգովան խաբեբա էր ու այնպիսի հմայքով է ներկայացվում Միրոնովի կողմից, որ հանդիսատես կանանց մեծ մասը սիրահարվում են: Իսկ Միրոնովը հետո տխրությամբ է արձանագրում, թե ցավալի է արձանագրել, որ կինոյում իր ամենամեծ նվաճումը «Ադամանդե ձեռքում» մարմնավորած խաբեբայի կերպարն է եղել:

Երկրորդ չարագործի՝ Լյոլիկի դերում դիտարկվել են Անատոլի Պապանովի եւ Միխայիլ Պուգովկինի թեկնածությունները: Գեղարվեստական խորհուրդը հաստատել է Պապանովին: Լյոլիկի շատ արտահայտություններ, որոնք նա ասում է Պապանովի մատուցմամբ կինոնկարի ընթացքում, դարձան թեւավոր խոսքեր, ինչպես, օրինակ. «Եթե մարդն ապուշ է, ապա դա երկար ժամանակով է», կամ՝ «Չկա որեւէ ամուսին, ով գոնե մի ժամով չի երազել դառնալ ամուրի», կամ՝ «Կհարվածեմ զգուշորեն, բայց՝ շատ ուժեղ», «Ուրիշի հաշվին խմում են նույնիսկ չխմողներն ու ստամոքսի խոց ունեցողները» եւ այլն: Երկար ժամանակ, ի դեպ, Պապանովը չի կարողացել խաղալ ձկնորսության դրվագը: Հերթական անհաջող փորձից հետո նա ասիստենտին բարձր ձայնով ասում է «ապուշ»: Նկարահանվում է պատահաբար: Գայդային այդ բացականչությունը դուր է գալիս, եւ նա որոշում է այն ներառել ֆիլմում: Սցենարի համաձայն, թեեւ Լյոլիկը, որպես հանցագործ, պետք է վախ ու հակակրանք առաջացներ, սակայն Պապանովի մատուցմամբ՝ հենց որ Լյոլիկը հայտնվում էր էկրանին, միայն ծիծաղ էր առաջացնում: Բավական վառ է ստացվել Նոնա Մորդյուկովայի մարմնավորած տնային կառավարչության ակտիվիստուհու կերպարը, թեեւ գեղարվեստական խորհուրդը նրա հետ կապված շատ պահանջներ է ունեցել: Սակայն Մորդյուկովան կարողացել է ստեղծել կերպար, որի արտասանած մտքերը եւս դարձել են թեւավոր խոսքեր, ինչպես, օրինակ. «Մեր մարդիկ հացի չեն գնում տաքսիով», կամ՝ «Չգիտեմ, թե Լոնդոնում ինչպես է, ես այնտեղ չեմ եղել, գուցե շունը մարդու բարեկամն է, սակայն մեզ մոտ տնային կառավարչությունն է մարդու բարեկամը»:

Հատկապես հետաքրքիր է եղել այն, թե ինչպես է Գայդայը կարողացել ֆիլմն «անցկացնել» Գեղխորհրդի «մաղով»: Նա որոշած է եղել, որ կինոնկարը պետք է ավարտվի այնպես, ինչպես հիմա կա, սակայն ընթացքում որոշում է, որ վերջում միջուկային պայթյունի ամպ պետք է լինի: Գեղխորհրդից հայտարարում են, որ այդ ամպը պետք է կինոնկարից հեռացվի: Գայդայը համառում է: Նրան երեք օր ժամանակ են տալիս: Արդեն Նոր տարին էր մոտենում, եւ պետք է նախագիծն ավարտվեր: Եվ ահա՝ Գայդայը հայտարարում է, որ համաձայն է այդ տեսարանը հանել, եւ կինոնկարն ավարտվում է այնպես, ինչպես նախատեսել էր: Գեղխորհուրդն էլ հանգիստ շունչ է քաշում, որ քաղաքական առումով բազմիմաստ վերջաբանը հանված է կինոնկարից:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉԵՂԱԾ ՏԵՂԸ՝ ՎԵՆՍՆ ԷԼ Է ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓ

TRIPP, TRIP… Թե բա՝ Վենսը Հայաստան եւ Ադրբեջան է այցելում, որ առաջ մղի TRIPP-ի նախաձեռնությունը: Կարելի է մտածել՝ Ալիեւն ու Ալիեւի հայաստանյան հանձնակատարը վատ են առաջ մղում

այդ նախաձեռնությունը, ու Վենսը եկել է, որ ավելի առաջ մղի: Օրինակ՝ Երեւանին ի՞նչ է առաջարկելու Վենսը, որ Երեւանը մինչ այս պետք է աներ, բայց չի արել: Իրենից ինչ հասնում էր՝ Երեւանն արել է դեռ անցյալ տարվա օգոստոսի 8-ին՝ Վաշինգտոնում Ադրբեջանի հետ ստորագրելով մի փաստաթուղթ, որով Ադրբեջանին տարածք էր տալիս՝ «Զանգեզուրի միջանցք» կառուցելու: Ենթադրենք՝ Թրամփը մի քիչ ազատ ժամանակ ուներ եւ վկայի կարգավիճակով մասնակցեց այդ թղթի ստորագրմանը: Հայաստանի անելիքը, ինչ է, դրանից ավելացավ: Վենսը երեւի մոռացել է, որ ստորագրումից հետո Հայաստանը պետք է նստեր եւ սպասեր իր 26 տոկոս եկամտին: Եվ, ուրեմն, էս ի՞նչ խաղեր են տալիս Վենսն ու Թրամփը: Հաստատ ուզում են այդ 26 տոկոսն էլ չտալ: Գործերը լավ չեն, հասկանում ես, Վենսը գնացել է, որ առաջ տա TRIPP-ը:

Խնդիրը միանգամայն այլ բովանդակություն է ստանում, սակայն, Վենս-Ալիեւ քննարկումների համատեքստում: Ադրբեջանը լրջագույն քաշելիք ունի, փող պիտի դնի, ճանապարհ պետք է կառուցի, ամերիկյան ընկերության համար կոմֆորտ ստեղծի «Զանգեզուրի միջանցքում»: Այդ ամենի դիմաց Ադրբեջանն ամերիկյան ընկերությունից պահանջում է ընդամենը անխոչընդոտ բեռնափոխադրումներ, ինչն էլ, ամենայն հավանականությամբ, մտահոգում է Թրամփ-Վենս զույգին: Ամբողջ աշխարհի հայացքն այսօր ուղղված է այդ զույգին, ու հանկարծ կարող է պարզվել, որ զույգն ուզում էր լավ բան անել, բայց ստացվեց այն, ինչ ստացվեց: Այսինքն՝ միջանցք, որ իրավաբանորեն վերահսկում է ԱՄՆ-ն, բայց այնպես, ինչպես դա թույլ է տալիս Ադրբեջանը: Իսկ Ադրբեջանն ասում է՝ իմ բեռների մեջ քիթդ չպետք է մտցնես: Կարող է հարց առաջանալ՝ այդ դեպքում ո՞րն է ԱՄՆ-ի անելիքն այս գործում, եթե նույնիսկ բեռները չի ստուգելու եւ անհրաժեշտության դեպքում՝ բռնագրավելու: Կարող են, չէ՞, այդ բեռների մեջ լինել զանգվածային ոչնչացման զենք, թմրանյութ, կարող են, չէ՞, այդ անխոչընդոտ ճանապարհով ահաբեկչական խմբավորումներ գնալ ու գալ: Հետո էլ մի սկանդալ պայթի, ու արի, Թրամփ, պատասխան տուր: Ո՞ւր է երաշխիքը, որ Ադրբեջանի շնորհիվ TRIPP-ը չի դառնա Մադուրոյի «բիզնեսի» մի մասը, կամուրջ չի դառնա արեւմտյան եւ արեւելյան կիսագնդերի միջեւ եւ չի ապահովի թմրանյութի անխոչընդոտ մատակարարումը մինչեւ Չինաստան եւ Թաիլանդ: Վենսը, ինչ է, եկել է, որ առաջ մղի այս «տնտեսական» ծրագիրը: Այդ դեպքում հարցս կրկնեմ՝ իսկ ինչո՞ւ է Վենսն իր այցին տվել այսպիսի անհեթեթ ձեւաչափ. նախ՝ Երեւան, հետո՝ Բաքու, եթե հայտնի է, որ Երեւանն իր 26 տոկոսի տերն է միայն: Գուցե Վենսը հավես ուներ հայաստանյան քաղբանտարկյալների եւ Բաքվում պահվող հայ ռազմագերիների հարազատների նամակնե՞ր կարդալու… Մարդը եկել է TRIPP-ն առաջ տալու, մինչդեռ այստեղ դեռ խաղաղություն էլ չկա… Ռազմագերիներ, օկուպացված տարածքներ, Իրանի շուրջ ամերիկյան ռազմածովային ուժերի կուտակում, պատերազմից 5 պակաս մի ամբողջ տարածաշրջան… Ինչ անի Վենսը, երբ Ալիեւն ու Ալիեւի հայաստանյան հանձնակատարը ԱՄՆ-ին վկայի կարգավիճակով ներքաշել են մի արկածախնդրության մեջ, որ կարելի է բնորոշել որպես լոկալ «խաղաղություն»՝ հանուն մեծ պատերազմի:

Եվ, այնուամենայնիվ, Վենսի այցը Հայաստան հիրավի նշանակալի իրադարձություն է մեր այս իշխանությունների կյանքում: Ի վերջո, մեր իշխանություններն էլ որոշակի պահանջներ եւ ցանկություններ ունեն, որոնց մասին, էլ ո՞ւրբ, եթե ոչ հիմա կարելի է պարզ խոսել Վենսի հետ… Պարոն Վենս, երբ վերադառնաք Վաշինգտոն, մեծարգո նախագահ Թրամփին տեղեկացրեք, որ ընտրություններից առաջ մեր վիճակը լավ չէ: Նախկիններն ուզում են մեզ ուտել, բլոկներ են կազմում, Եկեղեցին են ոտքի հանում… Թրամփին ասեք, որ էն «հրաշալի տղան» հազիվ է իրավիճակը պահում իր վերահսկողության տակ… Մոսկվային ընդդիմանալը դառնում է ավելի դժվար, Ալենին չեն հավատում, TRIPP-ն ու խաղաղությունը չեն օգնում արդեն, մի բան արեք՝ վերարտադրվենք… Եվ, իհարկե, մի քիչ էլ՝ փող…

ՀԳ. *Ժամանակին ԱՄՆ-ն պատրաստ էր 30 միլիարդի ներդրումներ անել Հայաստանում, այսինքն, այդ գումարի դիմաց Հայաստանի անկախությունը փաթեթով վերցնել: Իզուր էլ չհամաձայնեցինք… Ինչ իմանայինք, որ գալու է մեկն ու այդ «գործարքը» գլուխ է բերելու 5-8 միլիարդի սահմաններում, այն էլ ոչ թե ԱՄՆ-ի, այլ՝ Ադրբեջանի հետ:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 10.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ 26,5 ՄԻԼԻԱՐԴԱՆՈՑ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄԸ ՉԷ

Որքան էլ այս երկրի քաղաքական ու տնտեսական դասի որոշակի շրջանակներ չուզենան, միեւնույն է, Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացումը չի կարող առանց Ռուսաստանի հետ ունեցած 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառությունը հաշվի առնելու իրականացվել:

Այս առումով, այնքան, ինչքան որ Ռուսաստանի տնտեսությունից Հայաստանի տնտեսության այս տեսակ կախվածությունն է անթույլատրելի, դրանից ավելի շատ էլ այս երկրի տնտեսությունն այդպիսի կախվածությունից ազատելիս ռուսական տնտեսության հետ նրա 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառություն ունենալու փաստը հաշվի չառնելն է անթույլատրելի:

Այս երկրի քաղաքական եւ տնտեսական վերնախավը, այս իմաստով, վերջապես պիտի հասկանա, որ Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացումը չի նշանակում Ռուսաստանի հետ նրա ունեցած 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառության ապամոնտաժում: Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացումը նշանակում է Ռուսաստանի հետ եղած 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառություն՝ գումարած ԱՄՆ-ի եւ Եվրոպայի հետ ամեն օր ավելի մեծացող ապրանքաշրջանառություն, իսկ դա նշանակում է Ռուսաստանի հետ ունեցած 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառություն՝ գումարած Հնդկաստանի, Չինաստանի ու Իրանի հետ անընդհատ մեծացող ապրանքաշրջանառություն, դա էլ իր հերթին նշանակում է Ռուսաստանի հետ եղած այդ 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառություն՝ գումարած արաբական աշխարհի ու Կենտրոնական Ասիայի երկրների հետ ապրանքաշրջանառություն, դա էլ նշանակում է այդ 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառություն՝ գումարած Վրաստանի եւ Իսրայելի հետ նոր որակի ու նոր ծավալների ապրանքաշրջանառություն:

Եվ երբ այս երկրի տնտեսությունը ռուսական տնտեսության հետ եղած 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառությունը կրկնապատկած ու եռապատկած կլինի ԱՄՆ-ի, Եվրոպայի, Հնդկաստանի, Չինաստանի, Իրանի, արաբական աշխարհի, Վրաստանի, Իսրայելի եւ ուրիշ այլ երկրների հետ ունեցած իր ապրանքաշրջանառությամբ, այ, հենց այդ ժամանակ էլ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ ազատ առեւտուր անելու եւ լուրջ ծավալներով ապրանքաշրջանառություն ունենալու ժամանակը կգա: Հակառակ դեպքում, այն, ինչը որ կստացվի, ոչ թե Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացում, այլ Հայաստանի տնտեսության ռուսական կախվածությունը թուրք-ադրբեջանական տնտեսությունից կախվածությամբ փոխարինել կնշանակի:

Ու, այս իմաստով, այս երկրի քաղաքական ու տնտեսական վերնախավը, ի վերջո, պետք է հասկանա, որ եթե ստացվի այնպես, ինչպես որ իրենք են ուզում, ապա վաղը, երբ երկրի տնտեսությունն այլեւս թուրք-ադրբեջանական տնտեսության կցորդը դարձած տնտեսություն կլինի, այդ ժամանակ արդեն այս ժողովուրդն իր ամենակարեւոր խնդիրը, թերեւս, ոչ այն, թե երկիրն այդպիսի կախվածության տանողները դա ինչպես՝ «ինքնիշխանի կեցվածքով», թե առանց դրա են արել, այլ այդ անողներին պատասխանատվության ենթարկելը կդարձնի:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶՈՀՎԵԼ Է ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

«ԱրԲատ» գումարտակի հրամանատար Հայկ Գասպարյանը զոհվել է հատուկ ռազմական գործողությունների գոտում: Այս տեղեկությունը հայտնել է Գորլիվկայի քաղաքապետ Իվան Պրիխոդկոն՝ իր հրապարակման միջոցով: Հիշեցնենք, որ 2022 թվականի դեկտեմբերին Հայկ Գասպարյանը պետական պարգեւի էր արժանացել Ռուսաստանի նախագահի կողմից: Պարգեւը նրան շնորհվել էր հատուկ ռազմական գործողությունների ընթացքում ցուցաբերած խիզախության եւ հերոսության համար:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am